

# ԳԵԿՈՒՅՑ

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՄ

Պատրաստեց  
Հասմիկ Հարությունյանը

Սույն ուսումնասիրությունն իրականացվել է Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի օժանդակության շնորհիվ «Արդարացի դատախարական բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում:

Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծություններն արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

# Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ .....	4
Դատական իշխանության անկախության երաշխիքներն ու ստանդարտները .....	6
Դատական իշխանության անկախության օրենսդրական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում .....	10
Դատական իշխանության անկախության ինստիտուցիոնալ հիմքերը.....	13
Բարձրագույն դատական խորհուրդը .....	14
Բարձրագույն դատական խորհրդի հիմնական գործառույթները .....	19
Դատավորների ընտրությունն ու նշանակումը.....	20
Բարեվարքության ստուգում .....	24
Հատուկ կարգով որակավորման ստուգման անցկացումը .....	26
Դատավորների առաջխաղացումը .....	28
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ.....	42
ԱՄՓՈՓՈՒՄ .....	45
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	47

## ՆԱԽԱԲԱՆ

Դատական իշխանության անկախության հարցը անկախացումից ի վեր Հայաստանի Հանրապետության կարևորագույն խնդիրներից մեկն է եղել, որին տասնամյակներ շարունակ ուղղված են եղել ինչպես օրենսդրական, այնպես էլ պրակտիկայի փոփոխությունների ծրագրեր:

Դատական իշխանության առողջացման և անկախության հարցը նորովի դիտարկվեց հատկապես 2018 թվականի քաղաքական փոփոխություններից հետո, երբ նոր իշխանության կողմից բարձրացվեց անցումային արդարադատության և դատական բարեփոխումների անհրաժեշտությունը: Այս հարցը ամենաբարձր մակարդակով բազմիցս հնչել է նորընտիր վարչապետի կողմից՝ խոստանալով իրականացնել համակարգի մաքրում<sup>1</sup>: 2019-ի մայիսի 20-ին դատական համակարգի խնդիրների մասին իր ելույթում վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց՝ «Հայաստանում գործող բոլոր դատավորները պետք է ենթարկվեն, այսպես ասած, վերինգի: Այսինքն՝ հանրությունը պետք է ամբողջական տեղեկատվություն ունենա դատավորի ունեցած քաղաքական կապերի ու ծագումնաբանության, գույքային վիճակի, դատավորի կարգավիճակում և նախորդ շրջանում ծավալած գործունեության, անհատական և պրոֆեսիոնալ հատկանիշների մասին<sup>2</sup>»: Համակարգի արմատական վերինգ, որպես այդպիսին, իշխանության կողմից այդպես էլ չիրականացվեց, այլ որդեգրվեց առանձին ծրագրերի և գործողությունների միջոցով բարեփոխումների ճանապարհը: Այդ գործընթացքում առանձնակի ուշադրություն դարձվեց մի կողմից բարևարքության ինստիտուտի ներդրմանը, մյուս կողմից՝ դատավորների կարգապահական պատասխանատվության՝ որպես դատական համակարգը մաքրելու միջոց:

2019 թվականի հոկտեմբերի 10-ին ՀՀ Կառավարության կողմից ընդունվեց Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունն ու դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին որոշումը<sup>3</sup>:

---

<sup>1</sup> Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը պաշտոնավարման 100 օրվան նվիրված հանրահավաքին <https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2018/08/17/Nikol-Pashinyan-100-day-rally/>

<sup>2</sup> Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը դատաիրավական համակարգի վերաբերյալ [https://www.youtube.com/watch?v=3XKB\\_97WJs](https://www.youtube.com/watch?v=3XKB_97WJs)

<sup>3</sup> ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ Դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135487>

Ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրերի վերջնականատակն էր դատարանների և արդարադատության համակարգին առնչվող պետական ինստիտուտների վերակառուցումը անկախության և հաշվետվողականության չափանիշներով, ինչն անհրաժեշտ է ժողովրդավարական պետության զարգացման համար: Ըստ ռազմավարության՝ դատական համակարգը պետք է լիարժեք անկախանա, որպեսզի կարողանա հավասարակշռող ուժ դառնալ իշխանության մյուս ճյուղերի հետ հարաբերություններում<sup>4</sup>: Ռազմավարությունը և դրա մի շարք գործողություններ այնուհանդերձ կյանքի չկոչվեցին: 2022 թվականի հուլիսի 21-ին ՀՀ Կառավարության կողմից ընդունված որոշմամբ հաստատվեց ՀՀ Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների նոր ռազմավարությունն ու դրանից բխող գործողությունների ծրագիրը<sup>5</sup>: Ռազմավարության մեջ նույնությամբ տեղ գտան մի շարք ռազմավարական ուղղություններ և գործողություններ, որոնք անկատար էին մնացել 2019-2023 թվականների ռազմավարությամբ:

Չնայած ընթացիկ ռազմավարությանը և արդեն իսկ կատարված գործողություններին՝ մինչ օրս դատական իշխանության և դատավորների անհատական անկախության հարցը շարունակում է արդիական մնալ երկրում՝ ուղղակիորեն կապված լինելով երկրում իրավունքի գերակայության սկզբունքի ամրապնդման և մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության հետ:

Սույն ուսումնասիրությունը ներկայացնում է մի կողմից դատական իշխանության անկախության համար անհրաժեշտ միջազգային չափանիշները, մյուս կողմից ՀՀ ներպետական կարգավորումները՝ համեմատական վերլուծությամբ: Հաշվի առնելով հատկապես վերջին տարիների զարգացումները՝ առանձնակի ուշադրություն է դարձվում Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատական իշխանության անկախության ապահովման երաշխավորողի դերը, կազմավորման կարգն ու հիմնական գործառույթները, մասնավորապես՝ դատավորների

---

<sup>4</sup> Հավելված n 1 ՀՀ կառավարության 2019 թվականի կառավարության հոկտեմբերի 10-ի n 1441-լ որոշման, Ռազմավարություն Հայաստանի Հանրապետության Դատական եվ Իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների

<sup>5</sup> Հայաստանի Հանրապետության Դատական եվ Իրավական Բարեփոխումների 2022-2026 թվականների Ռազմավարությունը եվ դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու եվ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի n 1441-լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, հասանելի է հետևյալ հղումով՝

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166582>

ընտրությունն ու նշանակումը, առաջխաղացումները, կարգապահական պատասխանատվության ենթարկելն ու դատավորների գործունեության գնահատումը: Վերջիններս դատական համակարգի անկախության գնահատման հիմնական բաղադրիչներն են, որոնց մանրամասն ուսումնասիրությունը ներկայացվում է ստորև:

## **Դատական իշխանության անկախության երաշխիքներն ու ստանդարտները**

Դատական իշխանության անկախության սկզբունքը հենվում է իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա, համաձայն որի՝ գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունները կազմում են կառավարման համակարգի երեք առանձին ճյուղերը, որոնք փոխադարձ զսպիչների և հակակշիռների համակարգ ստեղծելով, միտված են կանխել իշխանության չարաշահումները:

Ըստ այդմ, դատական իշխանության անկախությունը ժողովրդավարական հասարակության ամենակարևոր հիմնաքարերից է:

Ինչպես Եվրոպական, այնպես էլ միջազգային մակարդակում ընդունվել են մի շարք փաստաթղթեր, որոնցով սահմանված են դատական իշխանության անկախության հիմքերն ու երաշխիքները:

Եվրոպական մակարդակով անկախ և անաչառ դատարանի իրավունքն առաջին հերթին սահմանվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով<sup>6</sup>: Եվրոպական մակարդակում դատական իշխանության անկախության հեղինակավոր փաստաթղթերից է նաև «Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» Նախարարների Կոմիտեի թիվ (2010) 12 հանձնարարականը<sup>7</sup>: Վերջինիս համաձայն անհատ դատավորի անկախությունը պաշտպանվում է դատական համակարգի անկախության միջոցով: Ավելին, հանձնարարականը առանձին կարևորություն է տալիս դատավորի անկախության սահմանադրական և օրենսդրական երաշխիքներին:

---

<sup>6</sup> Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիա, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=20870>

<sup>7</sup> Council of Europe, Committee of Ministers, Judges independence, efficiency and responsibilities, Recommendation CM/Rec (2010)12, <https://bit.ly/3YwvH8t>

Հանձնարարականը կարևորում է նաև այն, որ բոլոր այն դեպքերում, երբ դատավորը իր անկախության նկատմամբ ոտնձգումների վերաբերյալ կասկածներ ունի, պետք է հնարավորություն ունենա դիմելու անկախ դատական խորհրդի, կամ խորհուրդը պետք է լիազորություն ունենա միջամտել և շտկել դատավորի անկախության ոտնձգումների հարցերը: Ինչը ենթադրում է գործադիր իշխանությունից անկախ, պատշաճ կարգավիճակ և հեղինակություն ունեցող մարմնի ստեղծում<sup>8</sup>:

Դատական իշխանության անկախության և դատավորների անփոփոխելիության և անհատական անկախության երաշխիքների վերաբերյալ ընդգրկում և արժեքավոր փաստաթղթեր ընդունվել են նաև Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի կողմից՝ տարբեր կարծիքների տեսքով: Մասնավորապես, համաձայն ԵԴԽՄ թիվ 1 կարծիքի՝ որպես անկախության կարևոր երաշխիք սահմանվում է դատավորի անփոփոխելիության սկզբունքը: Համաձայն որի՝ դատավորի պաշտոնավարումը պետք է երաշխավորվի մինչև թոշակի անցնելու պարտադիր տարիքը կամ պաշտոնավարման սահմանված ժամկետի ավարտը: ԵԴԽՄ-ն գտնում է, որ դատավորների անփոփոխելիությունը պետք է լինի անկախության հստակ սահմանված տարր, որը պետք է սահմանվի ներպետական օրենսդրության ամենաբարձր մակարդակում:

ԵԴԽՄ-ի այլ կարծիքներ նույնպես վերաբերելի և կիրառելի են անկախության համատեքստում, օրինակ՝ ԵԴԽՄ-ի «Արդար դատաքննություն ողջամիտ ժամկետում» թիվ 6 Կարծիքը, «Արդարադատության (դատական) խորհուրդները՝ ի շահ հանրության» թիվ 10 Կարծիքը և «Դատական որոշումների որակը» թիվ 11 Կարծիքը<sup>9</sup>: Եվրոպական մակարդակում դատական իշխանության և դատավորների անկախության և վերաբերելի առանձին սկզբունքների վերաբերյալ կարևոր մոտեցում է ցուցաբերվել նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից:

Այսպես, Վենետիկի հանձնաժողովը բազմիցս՝ ինչպես առանձին երկրների վերաբերյալ, այնպես էլ որպես ընդհանուր ստանդարտի սահմանում, անդրադարձել է դատական իշխանության անկախության հարցին: Ըստ հանձնաժողովի, դատական իշխանության անկախությունը հանդես է գալիս օբյեկտիվ և սուբյեկտիվ բաղադրիչներով: Օբյեկտիվ բաղադրիչը դատական իշխանության անբաժանելի որակն է, սուբյեկտիվ բաղադրիչը վերաբերում է անկախ դատավորի կողմից անձի իրավունքների և ազատությունների վերաբերյալ հարցի որոշմանը:

---

<sup>8</sup> Նույն տեղում

<sup>9</sup> <https://www.coe.int/en/web/ccje/ccje-opinions-and-magna-carta>

Վենետիկի հանձնաժողովի կողմից հաստատված մոտեցման համաձայն՝ դատական իշխանության անկախությունը բաժանվում է երկու տեսակի՝ ինստիտուցիոնալ և անհատական: Ինստիտուցիոնալ անկախությունը վերաբերում է երկրի ներսում իշխանությունների բաժանմանն ու օրենսդիր և գործադիր մարմինների ճնշումներից դատարանների ազատ գործելուն: Անհատական անկախությունը վերաբերում է առանձին դատավորների կողմից ճնշումների բացակայությամբ գործերի քննությանն ու որոշումների կայացմանը:

Դատական իշխանության անկախությունը սահմանվում է նաև անկախության արտաքին և ներքին տեսակներով: Արտաքին և ներքին անկախության ապահովման չափանիշները, ընդհանուր առմամբ, հանգում են հետևյալին՝<sup>10</sup>

- Դատական իշխանության հիմնական սկզբունքները պետք է ամրագրում ստանան Սահմանադրության կամ համանման ուժ ունեցող իրավական փաստաթղթի մեջ: Այդ սկզբունքները ընդգրկում են դատական իշխանության՝ իշխանության այլ ճյուղերից անկախության հարցը, միայն օրենքին դատավորների ենթակայության հարցը, դատավորների տարբերակումը միայն ըստ նրանց իրականացրած գործառույթների և այլն,
- Դատավորների նշանակման և առաջխաղացման վերաբերյալ բոլոր հարցերը պետք է նախատեսվեն օրենքով և հիմնվեն օբյեկտիվ չափանիշների վրա,
- Դատավորների կարգավիճակի հետ անհամատեղելի սկզբունքները դատարանների անկախության ապահովման էական տարրերից են,
- Դատական իշխանության անկախության երաշխավորման կարևոր պայմաններից է անկախ դատական խորհրդի հիմնումը, որը դատավորների նշանակման և պաշտոնական առաջխաղացման հարցում որոշիչ դեր ունի,
- Դատավորները, ընդհանուր առմամբ, պետք է պաշտոնավարեն մինչև թոշակի անցնելը, փորձաշրջան նախատեսելը, անկախության տեսանկյունից կարող է խնդրահարույց լինել,

---

<sup>10</sup> European Commission for Democracy through Law, Compilation of Venice Commission opinions, reports and studies on constitutional justice, 1 July 2015

[https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI\(2015\)002-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI(2015)002-e)

Venice Commission, Report on the Independence of the Judicial System, 12-13 March 2010



- Կարգապահական վարույթներում որոշիչ դեր պետք է ունենան դատական խորհուրդները կամ կարգապահական դատարանները,
- Դատավորների համար պետք է նախատեսվի վարձատրության այնպիսի չափ, որը համահունչ է նրանց կարգավիճակին, արժանապատվությանն ու իրականացվող գործառույթներին,
- Դատավորներին հատկացվող բոնուսները և ոչ պաշտոնական առավելություններն ու օգուտները պետք է բացառվեն,
- Դատական իշխանության բյուջեի հատկացման հարցը պետք է լուծվի վերջինիս անկախության ապահովման մոտեցմամբ, ըստ այդմ, դատական իշխանությունը պետք է հնարավորություն ունենա իր կարծիքը հայտնել ներկայացված բյուջեի վերաբերյալ,
- Դատավորները պետք է օժտված լինեն միայն գործառնական անձեռնմխելիությամբ,
- Դատավորները չպետք է իրենց դնեն այնպիսի իրավիճակներում, որի պայմաններում վերջիններիս անկախությունը հարցականի տակ կդրվի: Նման իրավիճակների բացառման համար նախատեսվում են դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքների կատարման արգելք,
- Դատական որոշումները դատական վերանայման ընթացակարգից բացի այլ եղանակով վերանայման չեն կարող ենթարկվել,
- Դատական իշխանության նկատմամբ արտաքին ճնշումները բացառելու համար պրակտիկայում պետք է ապահովել «sub judice» սկզբունքը, ինչը նշանակում է, որ պետք է հավասարակշռություն մտցնել դատական գործընթացների պաշտպանության և հանրային կարևորության հարցերի հրապարակայնության և դրանց շուրջ ազատ քննարկումների միջև,
- Դատական իշխանության ներքին անկախությունը նշանակում է, որ յուրաքանչյուր դատավորի անհատական անկախությունը դատական գործառույթներ իրականացնելիս բացառում է դատավորների ենթակայությունը միմյանց հետ հարաբերություններում,

- Դատական գործերի բաշխումը դատավորների միջև պետք է իրականացվի օբյեկտիվ և թափանցիկ չափանիշների հիման վրա: Այդ չափանիշները պետք է սահմանված լինեն օրենքով:

Անդրադառնալով ՄԱԿ-ի շրջանականերում ընդունված փաստաթղթերին՝ ապա հղում պետք է կատարել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 10-րդ հոդվածին<sup>11</sup> և դրա վրա հիմնված՝ («Յուրաքանչյուր ոք, իր իրավունքների և պարտականությունների սահմանման և իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի դեպքում, ունի լիակատար հավասարության պայմաններում անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդարացի ու հրապարակային դատաքննության իրավունք») ընդունված Միավորված Ազգերի մի շարք չափանիշներին, որոնք կրկին վերաբերում են դատական իշխանության անկախությանը, մասնավորապես՝ Միավորված Ազգերի Գլխավոր Ասամբլեայի կողմից 1985 թվականին սահմանված Դատական մարմինների անկախության հիմնական սկզբունքները<sup>12</sup> և Դատավորների վարքագծի Բանգալորյան սկզբունքները՝ ընդունված 2002 թվականին<sup>13</sup>:

## **Դատական իշխանության անկախության օրենսդրական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում**

Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության անկախության հարցը մշտապես եղել է օրակարգային և տեղ է գտել Դատական և իրավական բարեփոխումների ծրագրերում և գործողություններում<sup>14</sup>: Դատական իշխանության անկախության հարցը որպես նպատակ դիտարկվեց նաև 2015 թվականի սահմանադրական բարեփոխումներում: Ըստ այդմ, Սահմանադրական բարեփոխումների արդյունքում, ի թիվս այլ փոփոխությունների, էապես փոխվեց դատավորի կարգավիճակը, դատավորների թեկնածուներին ներկայացվող

<sup>11</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1896>

<sup>12</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=18504>

<sup>13</sup> <https://www.unodc.org/documents/ji/training/bangaloreprinciples.pdf>

<sup>14</sup> Դատական և իրավական բարեփոխումների ծրագրերի ազդեցությունը ՀՀ-ում դատական իշխանության անկախության հաստատման վրա, Հասմիկ Հարությունյան, հետազոտություն, 2018 <https://bit.ly/4hhEGBS>

պահանջները, դատավորների ընտրության և նշանակման կարգը, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի կարգավիճակը<sup>15</sup>:

Ըստ այդմ 2015 թվականի Սահմանադրությամբ և այնուհետ դրա հիման վրա 2018 թվականին ընդունված նոր Դատական օրենսգրքով նախատեսվեց Բարձրագույն դատական խորհուրդը՝ որպես դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող մարմին, ամրագրվեց դրա կազմավորման կարգն ու կազմը, հիմնական գործառույթները:

Սահմանադրությամբ ամրագրված է, որ *«Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ<sup>16</sup>..»:*

2018 թվականի Դատական օրենսգրքով արդեն, հիմք ընդունելով Սահմանադրության համապատասխան կարգավորումները, առավել հստակեցվեցին նաև դատական իշխանության և դատավորների անկախության հիմքերն ու երաշխիքները:

Մասնավորապես, օրենսգրքի 7-րդ հոդվածով սահմանվում է ՀՀ-ում դատարանների անկախությունը: Համաձայն որի՝ *Արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելիս դատավորն անկախ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, պաշտոնատար, ֆիզիկական և իրավաբանական անձանցից և հաշվետու չէ որևէ մեկի, այդ թվում՝ պարտավոր չէ որևէ բացատրություն տալ: 2. Դատարանը գործը կամ հարցը (այսուհետ՝ գործ) քննում և լուծում է Սահմանադրությանը և օրենքին համապատասխան՝ գործի հանգամանքները գնահատելով իր ներքին համոզմամբ: 3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վտանգել կամ վնասել դատարանի կամ դատավորի անկախությունը:*

<sup>15</sup> «ՀՀ Դատական օրենսգրք» Սահմանադրական օրենք, օրենքի նախագիծ և հիմնավորում, հասանելի է՝ <https://www.e-draft.am/projects/136> հասցեում

<sup>16</sup> ՀՀ Սահմանադրություն, հոդված 164

Նույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված են նաև դատավորների անհատական անկախության երաշխիքները:

Դատավորի անկախության ապահովման օրենսդրական երաշխիքներից է օրենսգրքով ամրագրում ստացած դատավորի անձեռնմխելիության սկզբունքը: Այսպես, օրենքը նախատեսում է, որ «*..դատավորը, Սահմանադրության 164-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ: Ավելին, իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Բարձրագույն դատական խորհրդի համաձայնությամբ..*»<sup>17</sup>:

Դատավորների անկախության երաշխիքներից է նաև վերջիններիս անփոփոխելիությունը, որը որպես առանձին սկզբունք ամրագրում է ստացել օրենսգրքի 56-րդ հոդվածով: Վերջինիս համաձայն՝ «*1. Դատավորը պաշտոնավարում է մինչև իր 65 տարին լրանալը: 2. Եթե կրճատվում է դատարանում համապատասխան մասնագիտացման դատավորների թիվը, կամ վերացվում է դատարանը, ապա համապատասխան դատավորները համարվում են ռեզերվային, իսկ նրանց կարգավիճակը, այդ թվում՝ աշխատավարձը և հավելավճարներ ստանալու իրավունքը, առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվելու կամ ընդգրկված մնալու իրավունքը պահպանվում են մինչև Սահմանադրությամբ սահմանված՝ դատավորի պաշտոնավարման տարիքը լրանալը, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:*

Օրենսգիրքը հստակ սահմանում է նաև դատավորի լիազորությունների դադարեցման հիմքերը<sup>18</sup>: Համաձայն որի, դատավորի լիազորությունները դադարում են, եթե՝

- «1) նա հրաժարական է ներկայացնում.
- 2) լրացել է նրա 65 տարին.
- 3) նրան անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու մասին դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ.

<sup>17</sup> ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 51

<sup>18</sup> ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 160

4) նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ, կամ քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով.

5) կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կամ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն.

6) նա մահացել է...»:

Դատական համակարգի և դատավորների անհատական անկախության ապահովման համար կարևորվում է նաև օրենսդրությամբ ամրագրված և պրակտիկայում ապահովվող սոցիալական երաշխիքները: ՀՀ Դատական օրենսգիրքը այս առնչությամբ նախատեսում է, որ «...Դատավորի համար, Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն, սահմանվում է նրա բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրություն: Դատավորի վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենքով<sup>19</sup>»:

Կարելի է արձանագրել, որ Սահմանադրությամբ և Դատական օրենսգրքով առկա են բավարար հիմքեր դատական իշխանության և դատավորների անկախությունը երաշխավորելու համար, ինչը սակայն պահանջում է պրակտիկայում հետևողականություն և արդյունավետ կիրարկում:

## **Դատական իշխանության անկախության ինստիտուցիոնալ հիմքերը**

2015 թվականի Սահմանադրական փոփոխություններից հետո էական փոփոխության ենթարկվեցին նաև դատական իշխանության անկախությանն առնչվող ինստիտուցիոնալ հիմքերն ու կարգավորումները: Ինչի առնչությամբ կարևոր ձեռքբերում էր դատական համակարգի ինքնակառավարման նոր, միջազգային չափանիշներին համահունչ մարմնի ստեղծումը՝ ի դեմս Բարձրագույն դատական խորհրդի:

Դատական խորհուրդները դատական իշխանության անկախությունը ապահովող, դատավորների նշանակումն ու պաշտոնական առաջխաղացումը քաղաքական գործընթացներից և քաղաքական ազդեցությունից մեկուսացնող և դատավորների հաշվետվողականության համար պատասխանատու մարմիններն են:

---

<sup>19</sup> ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 57

Վերջիններս կարևոր դերակատարում ունեն նաև ողջ դատական իշխանության հաշվետվողականության ապահովման գործում:

## **Բարձրագույն դատական խորհուրդը**

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվեց, որ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը<sup>20</sup>: Համանման կարգավորում նախատեսվեց նաև 2018 թվականի ՀՀ Դատական օրենսգրքով<sup>21</sup>:

## **Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման կարգը**

Սահմանադրությամբ ամրագրում ստացավ նաև խորհրդի կազմը: Մասնավորապես, խորհուրդը կազմված է տասն անդամից, որից հինգ անդամներին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող դատավորների կազմից: Բարձրագույն դատական խորհրդում պետք է ընդգրկվեն դատավորներ բոլոր ատյանների դատարաններից: Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատարանի նախագահ կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ: Խորհրդի մյուս հինգ անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից: Ազգային ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատավոր<sup>22</sup>:

Խոսելով դատական խորհուրդների միջազգային փորձի մասին և համեմատական տանելով ՀՀ օրենսդրության հետ, պետք է ուշադրություն դարձնել հատկապես Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի մոտեցումներին:

Այսպես, Վենետիկի հանձնաժողովի կարծիքում ընդգծվում է, որ խորհրդի անդամների մեծամասնությունը կամ գերակշիռ մասը պետք է լինեն դատավորներ՝

<sup>20</sup> ՀՀ Սահմանադրություն, հոդված 173

<sup>21</sup> ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 79

<sup>22</sup> ՀՀ Սահմանադրություն, հոդված 174

ընտրված դատավորների կողմից<sup>23</sup>: Վենետիկի հանձնաժողովը ընդունել է նաև, որ անդամների ներկայացման ընթացակարգը պետք է այնպիսին լինի, որ ապահովի ոչ դատավոր անդամների մասնագիտական բազմազանությունը: Մասնագիտացված հասարակական կազմակերպություններից անդամների ներկայացնելու կապակցությամբ նշվել է, որ մասնագիտացված ՀԿ եզրույթը կարիք ունի հստակեցման, նեղ մեկնաբանության դեպքում այլ կառույցներից անդամ ներկայացնելու հնարավորությունը կարող է նվազել<sup>24</sup>:

ԵԴԽԽ համաձայն՝ դատական խորհուրդները նախ պետք է ամրագրում ստանան սահմանադրական մակարդակում կամ համարժեք օրենքով: ԵԴԽԽ-ն նույնպես սահմանում է, որ արդարադատության խորհուրդների կազմը պետք է այնպիսին լինի, որ կարողանա ապահովել դրա անկախությունը և գործառույթները արդյունավետ իրականացնելու հնարավորություն տա: Ըստ այդմ, խորհուրդը, հնարավոր է, բաղկացած լինի բացառապես դատավորներից կամ ունենա անդամների խառը կազմ՝ բաղկացած դատավոր և ոչ դատավոր անդամներից: Երկու դեպքում էլ անդամների կողմից անձնական շահերն ու դրանց պաշտպանությունը պետք է գոյություն չունենան: Այն դեպքում, երբ կազմը բաղկացած է միայն դատավորներից, նրանք պետք է ընտրվեն անմիջապես դատավորների կողմից: Խառը կազմի պարագայում, ավելորդ ճնշումներից խուսափելու համար, անդամների գերակշիռ մեծամասնությունը պետք է դատավորներ կազմեն<sup>25</sup>:

Որպես ընդհանուր մոտեցում ընդունված է, որ ոչ դատավոր անդամները հնարավոր է լինեն հայտնի իրավաբաններ, ակադեմիկոսներ, դասախոսներ: Վերջիններից պահանջվում է քաղաքական զսպվածություն, ինչպես նաև գործադիր իշխանությունից կատարյալ անկախություն: Սա իր հերթին նշանակում է, որ կառավարության գլուխը կամ որևէ նախարար չի կարող արդարադատության խորհրդի անդամ լինել:

---

<sup>23</sup> CDL-AD(2013)014 Opinion on the Draft Law on Amendments to the Constitution, Strengthening the independence of Judges and on the Changes to the Constitution proposed by the Constitutional Assembly of Ukraine (14-15 June 2013), para. 35 and CDL-AD(2010)026 Joint Opinion on the Law on the Judicial System and the Status of Judges of Ukraine, by the Venice Commission and the Directorate of Co-operation within the Directorate General of Human Rights and Legal Affairs of the Council of Europe (Venice, 15-16 October 2010)

<sup>24</sup> CDL- AD (2017)019, para. 89, opinion on the draft Judicial Code of Armenia, Adopted by the Venice Commission, 2017

<sup>25</sup> Consultative Council of European Judges (CCJE), Opinion no.10(2007)

Այս համատեքստում առանձնակի կարևորվում է նաև խորհրդի նախագահի անկողմնակալ լինելը, ով որևէ մտերմություն չպետք է ունենա քաղաքական կուսակցությունների հետ<sup>26</sup>:

ԵԴԽԽ-ն սահմանել է, որ դատավոր անդամները պետք է ընտրվեն դատական իշխանության կողմից՝ խորհրդի անկախությունն ապահովելու համար: Անդամների ներգրավումը հնարավոր է իրականացնել, օրինակ, ընտրության միջոցով: Ինչ վերաբերում է ոչ դատավոր անդամներին, ապա ԵԴԽԽ-ն խորհուրդ է տալիս ոչ դատավոր անդամներին նշանակել չքաղաքականացված ընթացակարգով<sup>27</sup>: Ավելին, այն դեպքում, երբ ոչ դատավոր անդամները ընտրվում են ազգային ժողովի կողմից, ապա վերջիններս պետք է ընտրվեն որակյալ մեծամասնության կողմից՝ ընդդիմության աջակցությամբ և մասնակցությամբ, և որ ամենակարևորն է, պետք է ապահովեն հասարակության լայն ներկայացվածությունը:

Նշանակումների գործընթացին անդրադարձել է նաև Դատական իշխանության եվրոպական ցանցը: Վերջինիս համաձայն՝ խորհուրդների անդամների նշանակումները պետք է այնպես լինեն, որ բացառվի գործադիր կամ օրենսդիր մարմնի միջամտությունը<sup>28</sup>:

Այսինքն, ընդհանուր մոտեցումը պահանջում է անդամների ընտրության և նշանակման այնպիսի եղանակ, որը չի ազդի հետագայում դրա գործունեության անկախության և արդյունավետության վրա:

Ինչպես արդեն ներկայացվեց, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է Բարձրագույն դատական խորհրդի կազմում դատավոր և ոչ դատավոր անդամների հավասար թիվ, մինչդեռ ներկայացված միջազգային ստանդարտները նախատեսում են խորհրդի կազմում դատավորների մեծամասնություն:

Ներպետական օրենսդրությամբ սահմանված են նաև ԱԺ կողմից ընտրված խորհրդի անդամին ներկայացվող անհամատեղելիության պահանջները<sup>29</sup>: ԱԺ կողմից ընտրված ոչ դատավոր անդամը չի կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի աշխատանք՝ բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Ինչ վերաբերում է ոչ դատավոր անդամներին ներկայացվող

<sup>26</sup> Consultative Council of European Judges (CCJE), Opinion no.10(2007), կետ 33

<sup>27</sup> Նույն տեղում

<sup>28</sup> ENCJ (2010–2011) Councils for the Judiciary report

<sup>29</sup> Դատական օրենսգիրք, հոդված 83-ը



պահանջներին, ապա վերջիններս պետք է լինեն հեղինակավոր իրավաբաններ, լինեն ՀՀ քաղաքացի, ունենան ընտրական իրավունք, օժտված լինեն բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ<sup>30</sup>:

Խորհրդի ոչ դատավոր անդամներին ներկայացվող պահանջների և ընտրության կարգի առնչությամբ առկա են մտահոգություններ: Մասնավորապես, հեղինակավոր իրավաբան եզրույթը բավականին լայն է և ոչ հստակ, ինչը պրակտիկայում կարող է տարատեսակ մեկնաբանությունների հանդիպել: Ավելին, հստակ չէ, թե կոնկրետ որ ոլորտներից և ինչ չափանիշների հիման վրա պետք է ընտրվեն հեղինակավոր իրավաբանները; չկա նաև պահանջ քաղհասարակությունից անդամ ներգրավվելու վերաբերյալ:

Խոսելով ԲԴԽ ձևավորման մասին՝ պետք է տարանջատել դատավոր և ոչ դատավոր անդամների ընտրության կարգը և արդեն իսկ արձանագրված պրակտիկ նշանակումները: ՀՀ-ում դատավոր անդամների ընտրության կարգը համապատասխանում է միջազգային մոտեցումներին, քանզի, որպես ընդունված մոտեցում, դատավոր անդամները ընտրվում են դատավորների ընդհանուր ժողովի կողմից:

Ըստ էության ոչ դատավոր անդամների ընտրության սահմանված կարգը նույնպես համահունչ է, սակայն խնդրահարույց է ԲԴԽ ոչ դատավոր անդամների ընտրության պրակտիկան: Այսպես, ձևավորումից ի վեր՝ սկսած 2018 թվականից, Բարձրագույն դատական խորհրդի կազմը ինչպես մասնագիտական հանրության, այնպես էլ լայն հանրության շրջանակներում մեծ վստահություն չի վայելել, ինչը պայմանավորված է եղել կազմի և դատավոր և ոչ դատավոր անդամների նախկին գործունեությամբ և ունեցած կապերով: Առաջին կազմում ոչ դատավոր անդամի պաշտոնում Ազգային ժողովի կողմից ընտրվել են անդամներ, որոնց մեջ եղել է երկար տարիներ ընդհուպ կուսակցական պատկանելություն ունեցող իրավաբան-գիտնական<sup>31</sup>: Խնդրահարույց և ոչ օբյեկտիվ չափանիշների հիման վրա ընտրված անդամների պատճառով էր, որ կարճ ժամանակ անց և 2018 թվականի քաղաքական փոփոխություններից հետո նորաստեղծ ԲԴԽ անդամները սկսեցին իրար հետևից

<sup>30</sup> Դատական օրենսգիրք, հոդված 80

<sup>31</sup> Զեկույց «Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության ինքնակառավարման մարմինների գործունեությունը որպես դատական իշխանության անկախության երաշխիք», ԻՊԱՍ, 2018

Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/4heSRaU>

հրաժարական տալ<sup>32</sup>: Հետագայում, սակայն, ԲԴԽ ոչ դատավոր անդամների Ազգային ժողովի կողմից ընտրությունը շարունակել է մնալ մտահոգիչ և ոչ միշտ արժանիքահեն ու մրցակցային սկզբունքով առաջադրված: Օրինակ, ոչ դատավոր անդամի պաշտոնում օրենսդրի կողմից ընտրվել է իրավաբան, ով հրապարակային խոստովանել է, որ իշխող ուժի կուսակցության կողմից զանգ է ստացել և առաջարկ՝ ԲԴԽ անդամ դառնալու վերաբերյալ<sup>33</sup>: Անկախ իրավաբան-գիտնականի անձից և պրոֆեսիոնալիզմից՝ նման ընթացակարգով թեկնածուի առաջադրումը և նույն ուժի պատգամավորների կողմից ընտրությունը վերջինիս անկախության և անկողմնակալ գործունեության տեսանկյունից մտահոգիչ է: Այս նշանակմանը հաջորդել են այլ նշանակումներ ևս<sup>34</sup>, որոնք ուղեկցվել են մասնագիտական հանրության կողմից քննադատություններով և կրկին բարձրացրել մտահոգություններ՝ գործընթացի մրցակցայնության և թեկնածուներից պահանջվող օբյեկտիվ չափանիշների առնչությամբ, ինչը վերջիններիս անկախության երաշխիքներից է:

Քաղաքացիական հասարակության կողմից օբյեկտիվ քննադատության է արժանացել նաև ԲԴԽ ոչ դատավոր անդամների 2022 թվականի ընտրությունները: Մասնավորապես, ՀՀ Ազգային ժողովի Քաղաքացիական պայմանագիր խմբակցությունը որպես Բարձրագույն դատական խորհրդի ոչ դատավոր անդամների թեկնածուներ է առաջադրել ՀՀ արդարադատության նախարարին և նույն նախարարի տեղակալին: Ինչը կրկին վեր է հանել տվել դատական իշխանության պաշտոններում ընտրությունների և նշանակումների իրականացումը քաղաքական նպատակահարմարությամբ իրականացնելու՝ քաղաքական իշխանության միտումը՝ վտանգելով ոչ միայն Բարձրագույն դատական խորհրդի, այլև ողջ դատական իշխանության ապաքաղաքականացվածությունը, հեղինակությունն ու վստահելիությունը, ինչպես նաև գործունեության արդյունավետությունը: Այս ընտրությունը նույնպես արժանացել է քաղհասարակության և ոլորտային կառույցների քննադատությանը<sup>35</sup>, բարձրացված խնդիրները տեղ են գտել նաև ՀՀ

<sup>32</sup> <https://infocom.am/hy/article/413>

<sup>33</sup> ՀՀ ԱԺ յոթերորդ գումարման Ազգային ժողով, 20 հունիսի 2019 թվականի նիստի սղագրություն, ԲԴԽ ոչ դատավոր անդամ Գրիգոր Բեքմեզյանի ընտրություն և հարցուպատասխան, հասանելի է հետևյալ հղումով՝

<http://www.parliament.am/transcript.php?AgendaID=3680&day=20&month=06&year=2019&lang=arm>

<sup>34</sup> <https://bit.ly/4fbxqpt>

<sup>35</sup> [Հայտարարություն Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ – PRWB](#)

վերաբերյալ Տնտեսական համագործակցության և զարգացման տարեկան զեկույցի մեջ<sup>36</sup>:

Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես դատարանների և դատավորների անկախության երաշխավորի առաքելությունը պահանջում է դրա անդամների քաղաքական չեզոքություն և զսպվածություն, ինչպես նաև գործադիր իշխանությունից կատարյալ անկախություն՝ որպես դատական իշխանության անկախության և անաչառության երաշխիք՝ ապահովելու համակարգի նկատմամբ հանրային բարձր վստահությունը: Մինչդեռ, օրենսդիր մարմնի կողմից ԲԴԽ ոչ դատավոր անդամների նկարագրված ընտրությունները փաստում են, որ առաջին ձևավորումից ի վեր դատական իշխանության անկախությունը երաշխավորող մարմնի կազմը եղել է խնդրահարույց՝ պայմանավորված քաղաքական նպատակահարմարությամբ կատարված անդամների ընտրությամբ, ինչը հետագայում բացասաբար է անդրադառնում նաև վերջինիս արդյունավետ և անաչառ գործունեության վրա:

## **Բարձրագույն դատական խորհրդի հիմնական գործառնությունները**

Առանձին երկրներում գործող խորհուրդների գործունեության փորձը ցույց է տալիս, որ վերջիններս օժտված են տարբեր շրջանակի լիազորություններով: Վերջիններս կրում են տարբեր անուններ՝ «դատական իշխանության բարձրագույն խորհուրդ», «արդարադատության խորհուրդ» և այլն: Մակայն, անկախ նրանից թե ինչպես դրանք կկոչվեն, նման մարմինների հիմնական նպատակն է ապահովել դատավորների անկախությունն ու դատարանների ինքնուրույնությունը պետական իշխանության այլ ճյուղերի անհարկի միջամտություններից և ազդեցությունից: Սա հատկապես կարևորվում է խորհուրդների այնպիսի գործառնությունների իրականացման ժամանակ, ինչպիսիք են դատավորների ընտրությունն ու նշանակումը, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելը և այլն<sup>37</sup>:

Գալով ՀՀ կարգավորումներին՝ պետք է արձանագրել, որ օրենսդրությամբ սահմանված է Բարձրագույն դատական խորհրդի իրավասությունների բավականին լայն շրջանակ:

---

<sup>36</sup> OECD, The Istanbul Anti-corruption Action plan, Baseline Report of the Fifth Round of Monitoring of Anti-corruption Reforms in Armenia, 2024; <https://bit.ly/3YeNZtI>

<sup>37</sup> Վենետիկի հանձնաժողով, Դատարանների և դատավորների վերաբերյալ Վենետիկյան հանձնաժողովի կարծիքների ժողովածու, CDL-PI(2015)001, էջ 56

Այսպես, ՀՀ Դատական օրենսգրքի 89-րդ հոդվածը ամրագրել է Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները, ներառելով այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝

- դատավորների նշանակումը,
- առաջխաղացումը,
- լիազորությունների դադարեցումը,
- կարգապահական պատասխանատվության ենթարկելը,
- դատարանների ծախսերի նախահաշիվները հաստատելը,
- դատարանների պահուստային ֆոնդերի բաշխումը և
- մի շարք այլ գործառույթներ

Անդրադառնանք այս գործառույթներից որոշներին առանձին-առանձին՝ ներկայացնելով ինչպես օրենսդրական կարգավորումները, այնպես էլ պրակտիկ կիրառումն ու խնդիրները:

### **Դատավորների ընտրությունն ու նշանակումը**

Դատավորների ընտրության և նշանակման կարգը նախ սահմանված է Սահմանադրությամբ: Համաձայն որի՝ Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ<sup>38</sup>:

Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ: Ազգային ժողովն առաջարկվող թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից: Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, համապատասխան պալատի կազմից, վեց տարի ժամկետով: Նույն անձը Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ կարող է նշանակվել միայն մեկ անգամ:

Վճռաբեկ դատարանի նախագահին ընտրում է Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, Վճռաբեկ դատարանի կազմից, վեց տարի

---

<sup>38</sup> ՀՀ Սահմանադրություն, հոդված 166

ժամկետով: Նույն անձը Վճռաբեկ դատարանի նախագահ կարող է ընտրվել միայն մեկ անգամ:

Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, համապատասխան դատարանի կազմից, երեք տարի ժամկետով: Դատարանի նախագահն իր պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո՝ երեք տարվա ընթացքում, չի կարող վերստին նշանակվել այդ պաշտոնում:

Սահմանադրությամբ ամրագրում ստացած այս կարգավորումները առավել մանրամասն ներկայացվում են Դատական օրենսգրքով: Վերջինս հստակ սահմանում է դատավորների ընտրության և նշանակման կարգը, ինչը իրականացվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից:

Որակավորման ստուգումը բաղկացած է հայտի ներկայացման և ստուգման, գրավոր քննության և հարցազրույցի անցկացման փուլերից:

Այսպես, Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի համալրման անհրաժեշտության մասին՝ հաշվի առնելով նաև դատավորների թեկնածուների ցուցակում առկա թեկնածուների քանակը, համապատասխան մասնագիտացման դատավորների առկա և կանխատեսվող թափուր պաշտոնների քանակը և այլ այնպիսի հանգամանքներ, որոնք հանգեցնում կամ կարող են հանգեցնել դատավորների թեկնածուների ցուցակի համալրման անհրաժեշտության:

Բարձրագույն դատական խորհրդի որոշման հիման վրա հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում է հայտարարություն, որն առնվազն պետք է պարունակի տեղեկություններ դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով որակավորման ստուգում անցկացնելու մասին՝ նշելով դիմումների ընդունման ժամկետները և վայրը:

Դատավորի թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվել հավակնող անձը որակավորման ստուգման մասին որոշման հրապարակման օրվան հաջորդող օրվանից մեկամսյա ժամկետում որակավորման ստուգմանը մասնակցելու համար Բարձրագույն դատական խորհուրդ է ներկայացնում:

Բարձրագույն դատական խորհրդի սահմանած ձևի հայտ, որին կցվում են նաև օրենքով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը<sup>39</sup>:

Դատական դեպարտամենտն ստուգում է հայտի և դրան կից ներկայացված փաստաթղթերի, բացառությամբ բարեվարքության վերաբերյալ լրացված

---

<sup>39</sup> ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 98

հարցաթերթիկի, լիարժեքությունն ու սահմանված պահանջներին համապատասխանությունը, ինչպես նաև իրավասու մարմիններին ուղղված գրավոր հարցումների միջոցով պարզում է տրամադրված տեղեկությունների և ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը: Դատական դեպարտամենտը որոշմամբ մերժում է հայտի ընդունումը, եթե այն ներկայացվել է սույն օրենսգրքով սահմանված ժամկետի խախտմամբ կամ չի բավարարում սույն օրենսգրքով նախատեսված պահանջները: Ներկայացված փաստաթղթերը վերադարձվում են հավակնորդին երեք աշխատանքային օրվա ընթացքում: Եթե հայտն ընդունելը մերժելու հիմքն իր մեջ պարունակում է հանցագործության հատկանիշներ, ապա Դատական դեպարտամենտն այդ մասին հաղորդում է ներկայացնում իրավասու մարմին<sup>40</sup>:

Օրենսդիրը սահմանել է նաև երաշխիքներ, հավակնորդի ընթացակարգային իրավունքները պաշտպանելու համար: Մասնավորապես, հայտի ընդունման մերժումը դատական կարգով բողոքարկելու դեպքում հավակնորդը կարող է մասնակցել որակավորման ստուգման հերթական և հաջորդ փուլերին<sup>41</sup>:

Հայտերի ընդունման փուլից հետո հավակնորդները մասնակցում են որակավորման գրավոր փուլին, ինչը կազմակերպվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից:

Գրավոր քննության հարցեր մշակելու համար Բարձրագույն դատական խորհուրդն ընտրում է համապատասխան մասնագետ (մասնագետներ) կամ մասնագիտացված կազմակերպություն: Այս առումով սակայն լրացուցիչ չի հստակեցվում, թե ինչպես են այդ մասնագետները ընտրվում և ինչպիսի երաշխիքներ են գործում վերջիններիս անկախությունն ու անկողմնակալությունը ապահովելու համար:

Գրավոր քննություն անցկացնելու օրվանից առնվազն 10 օր առաջ Դատական դեպարտամենտը հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակում է գրավոր քննության առաջադրանքների առնվազն մեկ նմուշօրինակ:

Ըստ կարգավորումների՝ որակավորման գրավոր քննությունն անցկացվում է համապատասխանաբար քրեական, քաղաքացիական, վարչական կամ հակակոռուպցիոն մասնագիտացման ոլորտում գրավոր առաջադրանքների միջոցով, որոնք, բացի տեսական իրավական գիտելիքների ստուգումից, ուղղված են նաև հավակնորդի վերլուծական և իրավակիրառ կարողությունների ստուգմանը:

<sup>40</sup> ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 99

<sup>41</sup> Նույն տեղում

Հավակնորդների համար նախատեսված է նաև բողոքարկման հնարավորություն: Մասնավորապես, քննության արդյունքները կարող են բողոքարկվել բողոքարկման հանձնաժողով՝ դրանք հրապարակելուց հետո՝ տասնհինգօրյա ժամկետում:

Որակավորման գրավոր փուլը Բարեհաջող հանձնած և բավարար միավորներ ստացած հավակնորդները մասնակցում են որակավորման Բանավոր՝ հարցազրույցի փուլին: Համաձայն ներպետական կարգավորումների՝ բողոքարկման արդյունքները հրապարակելուց, իսկ բողոքներ չլինելու դեպքում՝ բողոքարկման ժամկետը լրանալուց հետո Դատական դեպարտամենտը միասնական համալրված ցուցակը ներկայացնում է Բարձրագույն դատական խորհուրդ՝ հարցազրույց անցկացնելու նպատակով:

Հարցազրույցի փուլի նպատակն է պարզել դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար հավակնորդի անհրաժեշտ հմտություններն ու որակները: Վերջինս իրականացվում է երեք մասով՝

- յուրաքանչյուր հավակնորդի անձնական գործի, ներառյալ՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած խորհրդատվական եզրակացության և անցած մասնագիտական փորձի ուսումնասիրություն, որը ներկայացնելու համար Բարձրագույն դատական խորհրդի անդամներից մեկը խորհրդում հանդես է գալիս որպես զեկուցող:
- դատավորի վարքագծի կանոններին վերաբերող հիպոթետիկ խնդրի վերաբերյալ հավակնորդի կողմից իրականացվող վերլուծություն և դիրքորոշման ներկայացում՝ դատավորի վարքագծի հիմնարար կանոնների, դատավորին ներկայացվող պահանջների և որպես դատավոր գործելու համար կարևոր այլ անձնական հատկանիշները գնահատելու համար.
- համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ (օրենքի կամ այլ իրավական ակտի, այդ թվում՝ հիպոթետիկ իրավական նորմ, դատական ակտում արտահայտված դիրքորոշում, տեսության մեջ արտահայտված իրավական կարծիքներ և այլն) հավակնորդի կողմից իրականացվող վերլուծություն ու դիրքորոշման ներկայացում՝ կարճ ժամանակահատվածում հանպատրաստից կողմնորոշվելու, ինքնատիրապետման, վարվեցողության, հաղորդակցման հմտությունները, վերլուծական կարողությունները և դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ այլ հմտություններն ու որակները գնահատելու համար:

Հարցազրույցի փուլը բարեհաջող հաղթահարած և Խորհրդի կողմից դրական որոշում ստացած թեկնածուները ներառվում են թեկնածուների հավակնորդների ցուցակում, ինչը ներկայացվում է Արդարադատության ակադեմիա՝ նրանց ուսուցումը կազմակերպելու նպատակով, ինչից հետո թեկնածուները ներկայացվում են Հանրապետության նախագահի նշանակմանը:

Հարցազրույցի փուլին մինչև 2022 թվականի դեկտեմբերը նախատեսված է եղել նաև հոգեբանական ստուգում, հոգեբանի մասնակցությամբ, որի նպատակն է եղել պարզել թեկնածուի<sup>42</sup>

- հավակնորդի ուժեղ և թույլ կողմերը,
- շաբաթվա ո՞ր օրն է սիրում անձը,
- ո՞րն է վերջին կարդացած գիրքը,
- ու՞մ հետ կցանկանար ճանապարհորդել,
- ինչպե՞ս և ի՞նչ պայմաններում է պատկերացնում իր ծերությունը:

Հոգեբանական թեստավորումն ու ստուգումը սակայն 2023 թվականի սկզբից այլևս չի գործում, ինչի կապակցությամբ սակայն որևէ հիմնավորում և բացատրություն չի տրվել: Մինչդեռ, հաշվի առնելով այդ ստուգման կարևորությունն ու վերաբերելի մասնագետի մասնակցությունը, հույժ անհրաժեշտ է, որ դրա կապակցությամբ ցանկացած փոփոխություն պատշաճ կերպով հիմնավորվի:

## **Բարեվարքության ստուգում**

Դատավորների ընտրության և նշանակման գործընթացում կարևոր դերակատարում ունի նաև հավակնորդների բարեվարքության ստուգումը, ինչը ՀՀ-ում վերջին տարիներին ներդրված կարևոր ինստիտուտներից է: Բարեվարքության ստուգումը իրականացվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի /հետայսու՝ Հանձնաժողով/ կողմից:

Ըստ կարգավորումների՝ Դատական դեպարտամենտը միասնական համալրված ցուցակը Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնելուց հետո միաժամանակ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում միասնական համալրված ցուցակում ներառված հավակնորդների բարեվարքության

<sup>42</sup> Դատավորի թեկնածուների հավակնորդների հոգեբանական թեստավորման չափանիշները եվ անցկացման կարգը հաստատելու մասին ԲԴԽ-57-Ն-11 որոշում, 2020թ.  
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=145751>



վերաբերյալ լրացված հարցաթերթիկները՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

Բարեվարքության ստուգման համար կարևոր հարցերը ներառում են թեկնածուի և նրա ընտանիքի գույքային դրության, գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալների ուսումնասիրությունը, թեկնածուի կրթության, աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում՝ ուսումնական հաստատության, աշխատավայրի, զբաղեցրած պաշտոնի մասին տեղեկությունները, թեկնածուի քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու մասին տվյալները, քրեական ենթամշակույթին հարելու վերաբերյալ տեղեկությունները և օրենքով նախատեսված այլ հանգամանքներ<sup>43</sup>:

Նման տվյալների ուսումնասիրությունը և Հանձնաժողովի կողմից եզրակացության կազմումը ըստ էության նպատակ ունի նպաստել առավելագույն արժանիքահեն նշանակումներին՝ զերծ կոռուպցիոն ռիսկերից, ինչը դատական համակարգի արդյունավետ և անկախ գործելու գրավականներից մեկն է: Հարկ է նշել նաև, որ Հանձնաժողովի կողմից ընդունվող եզրակացությունները կրում են կոնֆիդենցիալ և խորհրդատվական բնույթ:

Այս առումով հատկանշական է վերջին տարիներին տեղի ունեցած նշանակումների առնչությամբ բարեվարքության ստուգման և դրա արդյունքների հետ կապված զարգացումները: Մասնավորապես, դեռևս 2022 թվականին հանրության և հատկապես քաղաքացիական հասարակության շրջանակներում լայն քննարկման և մտահոգությունների պատճառ դարձավ դատավոր Մնացական Մարտիրոսյանի հակակոռուպցիոն դատարանի դատավոր ընտրվելու, իսկ հետո նաև Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի նախագահ նշանակվելու հարցը: Մտահոգությունները կապված են եղել այն հանգամանքի հետ, որ վերջինիս բարեվարքության եզրակացությունը եղել է բացասական և դատավորը երկար տարիներ աչքի է ընկել քաղաքական հնչեղ գործերով ներգրավվածությամբ<sup>44</sup>: Եվ չնայած բացասական եզրակացության առկայությանը՝ վերջինս նշանակվել է դատարանի նախագահի պաշտոնում, ինչը բացասաբար է անդրադառնում դատական համակարգի նկատմամբ վստահության վրա և օբյեկտիվ կասկածներ բարձրացնում դատարանի անկախ և անաչառ գործունեության նկատմամբ:

<sup>43</sup> ՀՀ Օրենքը Կոռուպցիայի Կանխարգելման Հանձնաժողովի մասին, հոդված 26.1

<sup>44</sup> Չնշանակել Մնացական Մարտիրոսյանին Երևանի 1-ին աստիճանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի նախագահի պաշտոնում. հայտարարություն <https://www.aravot.am/2023/01/27/1319964/>

Ավելին, մտահոգիչ զարգացումներ են եղել նաև հակակոռուպցիոն դատարանի ձևավորման գործընթացում: Մասնավորապես, ոլորտային կազմակերպության կողմից իրականացված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը, բոլոր աստիճաններում, ուղեկցվել է մտահոգիչ նշանակումներով՝ կապված թեկնածուների բարեվարքության հետ, ինչը սակայն կրկին անտեսվել է որոշում կայացնողների կողմից<sup>45</sup>: Այս դեպքում, հաշվի առնելով հատկապես այս դատարանի կարևորությունն ու նպատակային նշանակությունը, ցանկացած խնդրահարույց նշանակում էական ազդեցություն է թողնում դատարանի արդյունավետ և անկախ գործունեության վրա և նվազեցնում հանրության վստահությունը:

## **Հատուկ կարգով որակավորման ստուգման անցկացումը**

Մինչև 2023 թվականը դատավորների որակավորման քննություններն ու ըստ այդմ ընտրությունն ու նշանակումը իրականացվում էր ընդհանուր կարգով՝ վերը ներկայացված փուլերով: 2022 թվականի դեկտեմբերին Դատական օրենսգրքում կատարված համապատասխան փոփոխություններով ներդրվել է նոր կարգավորում՝ *Հատուկ կարգով որակավորման ստուգում անցկացնելը և դատավորների թեկնածուների ցուցակում հատուկ կարգով որակավորման ստուգում անցած անձին ընդգրկելը*<sup>46</sup>: Կարգավորումը խնդրահարույց է մի քանի պատճառներով:

Նախ, պետք է նշել, որ օրենսգրքի փոփոխությունները կատարվել են առանց հանրային քննարկման և նման կարգավորումը հանրության և մասնավորապես քաղաքացիական հասարակությանը նախապես չի ներկայացվել և չի քննարկվել:

Դեռևս 2022 թվականի նոյեմբեր ամսին Կառավարության նիստում քննարկվել է Արդարադատության նախարարության կողմից ներկայացված ՀՀ Դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին փաթեթը, որը վերոնշյալ կարգի վերաբերյալ դրույթներ չի պարունակել<sup>47</sup>: Քննարկված փոփոխությունները վերաբերել են մասնավորապես հակակոռուպցիոն քաղաքացիական և կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով կայացված դատական ակտերի

---

<sup>45</sup> Հակակոռուպցիոն դատարանի ստեղծումը Հայաստանի Հանրապետությունում, զեկույց «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, 2023  
<https://prwb.am/2023/06/20/zekuyc-7/>

<sup>46</sup> ՀՀ Դատական օրենսգրք, հոդված 110.1

<sup>47</sup> 24 նոյեմբերի 2022 թվականի ՀՀ Կառավարության N 1796- Ս որոշում, հասանելի է հետևյալ հղումով՝  
<https://www.e-gov.am/gov-decrees/item/39363/>

վերաքննության կազմակերպմանը մասնագիտացված՝ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի կողմից և դրան վերաբերող այլ հարցերին:

Մինչ այս նախագծի առաջին ընթերցումը՝ ԱԺ պետաիրավական հանձնաժողովի արտահերթ նիստում, ԱԺ Քաղաքացիական պայմանագիր խմբակցության պատգամավորներից մեկի կողմից առաջարկություն է ներկայացվել նախագիծը՝ դատավորների որակավորման ստուգման հատուկ կարգի վերաբերյալ դրույթով լրացնելու մասին, որն ընդունելի է համարվել նախագծի հեղինակի՝ ՀՀ Արդարադատության նախարարության կողմից: Արդյունքում, Ազգային ժողովի կողմից ընդունվել է մի փաթեթ, ներառելով հատուկ կարգի խնդրահարույց կարգավորումները, որոնք հանրային քննարկման չեն ներկայացվել՝ խախտելով թափանցիկության և հրապարակայնության սկզբունքները:

Այս խնդրին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները տեղեկացել և անդրադարձել են փաթեթը ընդունվելուց հետո միայն<sup>48</sup>:

*Ըստ նոր կարգավորման՝ Դատավորների թեկնածուների ցուցակի համապատասխան բաժինը լրացնելու նպատակով Բարձրագույն դատական խորհուրդը կարող է որոշում կայացնել հատուկ կարգով որակավորման ստուգում անցկացնելու անհրաժեշտության մասին, որի դեպքում անձն ընդգրկվում է դատավորների թեկնածուների ցուցակում՝ առանց Արդարադատության ակադեմիայում ուսուցում անցնելու:*

Հատուկ կարգով թեկնածուների նկատմամբ կիրառվում են վերը ներկայացված գրավոր և բանավոր փուլերի կանոնները, սակայն վերջիններս ազատված են Արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից:

Հատուկ կարգին բնորոշ առանձնահատկություններից է նաև այն, որ, ըստ օրենսգրքի՝ Հատուկ կարգով որակավորման ստուգման կազմակերպման և իրականացման ձևի ու կարգի, կառուցվածքի և բովանդակության վերաբերյալ նվազագույն պահանջների և հատուկ կարգով որակավորման ստուգման անցկացման այլ առանձնահատկություններ Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանելիս պետք է ապահովեն որակավորման ստուգման էական բարդությունը<sup>49</sup>:

---

<sup>48</sup> «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ, զեկույց՝ Առաջին ատյանի ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով հատուկ կարգով անցկացված որակավորման քննությունների վերբերյալ. Օրենսդրական կարգավորումներ և պրակտիկա, 2023  
<https://bit.ly/3Ab4K0u>

<sup>49</sup> ՀՀ Դատական օրենսգրքը, հոդված 110.1, երրորդ մաս

Ինչը ենթադրում է, որ ընդհանուր կարգով որակավորման համեմատությամբ այս քննությունները առավել բարդ են:

Որակավորման քննությունների էական բարդությունը որևէ կերպ չի ներկայացվել, նաև հնարավոր չէ գնահատել քննությունների իրավական խնդիրների բարդությունը, ինչի պայմաններում այս նոր կարգի արդյունավետությունը մնում է խնդրահարույց:

Հարցի առնչությամբ սակայն առավել մտահոգիչ հարցը կապված է Արդարադատության ակադեմիայում ուսումնառությունը բացառելու հետ: Այսինքն, թեկնածուները քննությունները ստանձնելուց անմիջապես հետո ստանձնում են դատավորի պաշտոնը: Մինչդեռ Ակադեմիայում կրթության նպատակը ոչ միայն դատավորների հավակնորդներին լրացուցիչ և խորքային գիտելիքներով զինելն է, այլ անհրաժեշտ պրակտիկ հմտություններ ու կարողություններ տալը, ինչը վերացնելը նվազեցնում է այս խումբ դատավորների պատրաստվածության նկատմամբ վստահությունը:

Հատկանշական է, որ ներդրվելուց հետո, 2023 թվականին հատուկ կարգով որակավորման ստուգման արդյունքում նշանակվել է թվով 20, իսկ ընդհանուր կարգով որակավորման ստուգման արդյունքում՝ թվով 19 դատավոր: Այսինքն, մեկ տարում ավելի շատ դատավոր նշանակվել է նոր ներդրված կարգով, առանց համապատասխան ուսումնառության: 2024 թվականի առաջին կիսամյակում նշանակվել են դեռևս միայն ընդհանուր կարգով որակավորման ստուգման արդյունքում՝ թվով 4 դատավորներ<sup>50</sup>:

## **Դատավորների առաջխաղացումը**

Դատավորների առաջխաղացումը կազմակերպվում և իրականացվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից:

Ըստ Դատական օրենսգրքի՝ Բարձրագույն դատական խորհուրդը կազմում և հաստատում, այդ թվում՝ լրացնում և փոփոխում է առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները: Առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակները կազմվում են վերաքննիչ և վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար<sup>51</sup>:

<sup>50</sup> ՀՀ Դատական դեպարտամենտ, տեղեկատվության հարցման պատասխան, 2024 թ հուլիսի 1, N ԴԴ-1 Ե-5304 գրություն

<sup>51</sup> ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 122

Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացնում վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակի համալրման անհրաժեշտության մասին՝ հաշվի առնելով նաև վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ցուցակում առկա դատավորների թեկնածուների քանակը, վերաքննիչ դատարանների առկա և կանխատեսվող թափուր պաշտոնների քանակը և այլ այնպիսի հանգամանքներ, որոնք հանգեցնում կամ կարող են հանգեցնել դատավորների առաջխաղացման ցուցակի համալրման անհրաժեշտության: Համալրումը կարող է իրականացվել համալրման ենթակա տեղերի քանակով:

Օրենսգրքով սահմանված է նաև առաջխաղացման ենթակա դատավորներից պահանջվող չափանիշները: Մասնավորապես, վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար դատավորների առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակում կարող են ընդգրկվել՝

1) համապատասխան մասնագիտացման առաջին աստիճանի դատարանի դատավորի պաշտոնում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն ունեցող դատավորը, որը չունի կարգապահական տույժ՝ նկատողության կամ խիստ նկատողության ձևով:

2) վերջին 10 տարվա ընթացքում պաշտոնավարած նախկին դատավորը, որն ունի դատավորի առնվազն հինգ տարվա փորձառություն:

3) այն անձը, որը՝

ա) ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան և վերջին ութ տարիների ընթացքում առնվազն վեց տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում դասավանդել է իրավունք կամ գիտական աշխատանք է կատարել գիտական հաստատությունում, կամ

բ) ունի վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 8 տարվա փորձառություն<sup>52</sup>:

Բարձրագույն դատական խորհուրդն առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակը կազմելիս հաշվի է առնում վերաքննիչ դատարանի դատավորի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ հմտություններն ու որակները, թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը, իսկ դատավորի համար նաև գործունեության գնահատման արդյունքները:

---

<sup>52</sup> ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 123

Ինչ վերաբերում է վճռաբեկ դատարանի դատավորներին, ապա Վճռաբեկ դատարանի դատավորի պաշտոնավարման ժամկետը լրանալուց ոչ շուտ, քան երկու ամիս և ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ, իսկ այլ հիմքով Վճռաբեկ դատարանում դատավորի թափուր տեղ առաջանալու օրվանից մեկշաբաթյա ժամկետում Բարձրագույն դատական խորհուրդը հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում է հայտարարություն, որն առնվազն պետք է պարունակի դիմումներն ընդունելու ժամկետը, վայրը, համալրման ենթակա տեղերի քանակը:

Ազգային ժողովն առաջարկվող թեկնածուին ընտրում և Հանրապետության նախագահին առաջարկում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով<sup>53</sup>:

Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում կարող են ընդգրկվել քառասուն տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և օրենսգրքով մասնագիտական փորձին ներկայացվող պահանջները բավարարող դատավորներն ու իրավաբան գիտնականները<sup>54</sup>:

Պետք է նշել, որ դատավորների առաջխաղացումը, մասնավորապես վերաքննիչ և վճռաբեկ դատարանում պաշտոնի նշանակումը, մշտադիտարկման հնարավորություն չունի, այսինքն գործընթացը բացառապես կազմակերպվում և իրականացվում է Խորհրդի կողմից: Չնայած Խորհուրդը մշտապես ապահովում է հրապարակայնության սկզբունքը՝ տեղեկությունը և համապատասխան ցուցակները տեղադրելով դատական իշխանության պաշտոնական կայքում, սակայն ոչ միշտ է, որ տեղի է ունենում արժանիքահեն ընտրություն: Ավելին, Ազգային ժողովի կողմից իրականացվող Վճռաբեկ դատարանի դատավորների ընտրությունը իրականացվել է խնդրահարույց նշանակումներով, ինչը առավել նկատելի է եղել նորաստեղծ հակակոռուպցիոն դատարանի պարագայում<sup>55</sup>: Դատական համակարգում դատավորների առաջխաղացումների վերաբերյալ մտահոգություն է արտահայտվել նաև ՏՀԶԿ կողմից Հայաստանի վերաբերյալ վերջին զեկույցում՝ նշելով ոչ արժանիքահեն նշանակումների ու գործընթացում քաղաքական նպատակահարմարությունների մասին<sup>56</sup>:

<sup>53</sup> ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 133

<sup>54</sup> ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 132

<sup>55</sup> <https://bit.ly/3NAVIXO>

<sup>56</sup> OECD, The Istanbul Anti-Corruption Action Plan, Baseline Report of the Fifth Round of Monitoring of Anti-corruption Reforms in Armenia, 2024

## Դատավորների կարգապահական պատասխանատվությունը

Դատավորների կարգապահական պատասխանատվության հարցը վերջիններիս անկախությանն առնչվող կարևորագույն հարցերից է: Ինչը պահանջում է ինչպես հստակ օրենսդրական կարգավորումներ, այնպես էլ պրակտիկայի հետևողական և նպատակային կիրարկում՝ չխաթարելով վերջիններիս անկախությունն ու ազատությունը:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում այս հարցը առավել քննարկվող թեմաներից է եղել կապված մի կողմից կարգապահական պատասխանատվության հիմքերի հստակության, մյուս կողմից դրանց պրակտիկ մեկնաբանության, վարույթների հարուցման և կիրառվող պատասխանատվության միջոցների դրանց համաչափության հետ: Ստորև ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերելի կարգավորումներն ու պրակտիկայի խնդիրները:

Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկում է Բարձրագույն դատական խորհուրդը: Ըստ ներպետական կարգավորումների՝ կարգապահական վարույթը իրականացվում է օրինականության, դատական գործունեությանը չմիջամտելու, դատավորի և դատարանի անկախությունը հարգելու և հեղինակությունը բարձր պահելու, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության, կամայականության ու խտրականության արգելքի սկզբունքների հիման վրա<sup>57</sup>:

Օրենքով սահմանված են նաև պատասխանատվության հիմքերը: Մասնավորապես, Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները խախտելը, բացառությամբ սույն օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով սահմանված կանոնի, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

---

<https://bit.ly/3NGx7Hf>

<sup>57</sup> ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 141

Արարքը չի համարվում կարգապահական խախտում, եթե այն, թեև ձևականորեն պարունակում է օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով կասկածի տակ չի դնում տվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությամբ չի կարող հեղինակագրվել դատական իշխանությունը:

Օրենսդիրը սահմանել է նաև էական կարգապահական խախտումը<sup>58</sup>:

Պրակտիկայում առավել խնդրահարույց են դիտարկվել հատկապես էական կարգապահական խախտումներն ու դրա հիմքով դատավորի լիազորությունները դադարեցնելու դեպքերը, քանի որ այն պրակտիկ մեկնաբանության տեսանկյունից հստակ չէ և ունակ է հանգեցնել չարաշահումների:

Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ կարող են հանդիսանալ՝

1) անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումը.

2) կարգապահական խախտման մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները.

3) վարույթ հարուցող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերումը.

4) վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը:

Որպես դատավորների իրավունքների պաշտպանության երաշխիք՝ օրենքը սահմանել է նաև, որ անանուն հաղորդումները քննարկման ենթակա չեն<sup>59</sup>:

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին առավել մեծ ուշադրության է արժանացել կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների հարցը: Այսպես, ըստ Դատական օրենսգրքի, նման իրավասություն ունեն՝

1) Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը.

<sup>58</sup> ՀՀ Դատական օրենսգրքի, հոդված 142

<sup>59</sup> ՀՀ Դատական օրենսգրքի, հոդված 146



2) Լիազոր մարմինը՝ ի դեմ ՀՀ Արդարադատության նախարարության.

3) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմնի առնչությամբ խնդիրը կապվել է հատկապես Արդարադատության նախարարության հետ: Քանզի վերջինս, հանդիսանալով գործադիր իշխանության մաս, հնարավորություն ունի դատավորների նկատմամբ վարույթ հարուցել: Այսպես, Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խմբի 2021 թվականի Հայաստանի վերաբերյալ զեկույցի մեջ անդրադարձ է կատարվել նաև այս հարցին՝ նախարարությանը տրված նման իրավասությունը խնդրահարույց դիտարկելով<sup>60</sup>: Մասնավորապես, խոսելով դատական իշխանության մասին՝ GRECO-ն նշել է՝ *«Ինչ վերաբերում է դատական համակարգին, այս արդարադատության նախարարի դերը դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներում չի դադարեցվել, և ներկայիս իրավիճակը անհամատեղելի է դատական համակարգի անկախության հետ: Դատավորների աշխատանքի ընդունման և առաջխաղացման վերաբերյալ որոշումների համար առկա են բողոքարկման ճիշտ մեխանիզմներ, սակայն դրանք չկան ազատման որոշումների համար...»<sup>61</sup>:*

Այս հարցին սակայն անդրադարձ կատարել է նաև Վենետիկի հանձնաժողովը: Խոսելով Արդարադատության նախարարի կողմից դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորության մասին՝ Վենետիկի հանձնաժողովը գտել է, որ *նախարարին տրված նման լիազորությունը վիճելի չէ, քանի որ վերջինս դերակատարում չունի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերջնական որոշման կայացման հարցում: Արդարադատության նախարարության նման լիազորությունը հնարավոր կլինի վերացնել այն դեպքում, երբ էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովը լիարժեք աշխատում է<sup>62</sup>:*

---

<sup>60</sup> Council of Europe, GRECO Group of States against Corruption, Fourth Evaluation Round report on Armenia, 2021

<https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680a3fcad>

<sup>61</sup> Group of states against Corruption, Fourth evaluation round, Corruption prevention in respect of members of parliament, judges and prosecutors, Interim compliance report Armenia, 2021

<https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680a3fcad>

<sup>62</sup> European Commission for Democracy Through Law (Venice Commission) Armenia Draft Joint Opinion of The Venice Commission and The Directorate of Human Rights (Dhr) Of The Directorate General Of Human

Ըստ էության հայաստանյան իրականության մեջ նախարարությանը նման իրավասություն տալը պայմանավորված է եղել նաև վարույթ հարուցելու մյուս մարմինների գործունեության արդյունավետությամբ և անկախությամբ: Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կազմի մեծամասնությունը հանդիսանում են դատավորներ, ինչի պայմաններում կա մտավախություն, որ վերջինս լիարժեք չի իրականացնում իրեն տրված իրավասությունը: Ըստ այդմ, էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի գործունեությունը դեռևս չի բավարարում արդյունավետության այն պահանջներին, որոնք բխում են վերջինիս նպատակներից, ինչով պայմանավորված էլ պրակտիկայում երբեմն ձևավորում է հանձնաժողովի կողմից կորպորատիվ շահի սպասարկման մտահոգություններ: Ըստ այդմ, դեռևս նկատվում է անհրաժեշտություն պահպանել Արդարադատության նախարարին տրված՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթ հարուցելու լիազորությունը, մինչ կձևավորվի իրապես անկախ և արդյունավետ գործող էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով: Համանման մոտեցում արտահայտվել է նաև ՀՀ դատաիրավական ոլորտի բարեփոխումների առնչությամբ Համաշխարհային Բանկի կողմից պատրաստված զեկույցում<sup>63</sup>:

Մինևույն ժամանակ, սակայն, նախարարության կողմից կարգապահական պատասխանատվություն հարուցելու հնարավորությունը չպետք է պրակտիկայում չարաշահելու հիմք հանդիսանա: Այս առումով, Վենետիկի հանձնաժողովը ուշադրություն է հրավիրել նաև ՀՀ-ում վարույթների հարուցման իրավակարգավորումներին և առաջարկել այս ուղղությամբ լրացուցիչ քայլեր ձեռնարկել, քանզի ներկայիս համակարգը դեռևս կայացած չէ<sup>64</sup>:

Խոսելով վարույթների հարուցման մասին՝ անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել վերջին տարիների վիճակագրությանը և վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների գործունեությանը:

---

Rights And Rule Of Law (Dgi) of The Council Of Europe On The Amendments to The Judicial Code And Some Other Laws, 2019

<https://bit.ly/4099UVO>

<sup>63</sup> Supporting Judicial Reforms in Armenia: A Forward Look Public Expenditure and Performance Review of the Judiciary in Armenia, 2023

<sup>64</sup> Venice Commission, Joint Opinion of the Venice Commission and the Directorate General of Human Rights and Rule of Law of the Council of Europe on the Concept paper concerning the reform of the ethics and disciplinary commission of the general assembly of judges, 15-16 December 2023, available at

<https://bit.ly/40dreZS>

Այսպես, 2020 թվականին Արդարադատության նախարարության կողմից ներկայացվել է 13 միջնորդություն, Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից՝ 5 միջնորդություն: 2021 թվականին պատկերը եղել է համանման; հարուցված վարույթների թիվը աճել է, որտեղ կրկին մեծամասնություն է կազմել Արդարադատության նախարարության կողմից ներկայացվող միջնորդությունների թիվը, այն է՝ 18, էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից ներկայացված միջնորդությունների թիվը եղել է 6, իսկ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված միջնորդությունների թիվը՝ 4<sup>65</sup>:

2022 թվականի Արդարադատության նախարարության կողմից ներկայացվել է վարույթ հարուցելու 18 միջնորդություն, էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից՝ 5 և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից՝ 1 միջնորդություն<sup>66</sup>:

2023 թվականի ընթացքում էթիկայի և կարգապահական հարցերով Հանձնաժողովը ստացել է դատավորների կողմից ենթադրյալ կարգապահական խախտումներ թույլ տալու վերաբերյալ շուրջ 288 հաղորդում: Նշված ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից հարուցվել է 13 վարույթ, որից 3-ը հարուցվել է 2022 թվականի ընթացքում ստացված հաղորդումների, իսկ 1-՝ կարգապահական խախտման մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակման հիման վրա: Հարուցված 2 կարգապահական վարույթի շրջանակներում որոշվել է դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին<sup>67</sup>:

Ինչ վերաբերում է Արդարադատության նախարարության կողմից 2023 թվականի ընթացքում հարուցված վարույթներին, ապա պատկերը հետևյալն է: 2023թ-ի ընթացքում արդարադատության նախարարությունում ստացվել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ թվով 487 հաղորդում: 2023 թվականի ընթացքում «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի առիթով

<sup>65</sup> <https://iravaban.net/405356.html>

<sup>66</sup> <https://bit.ly/4dUzBg8>  
<https://bit.ly/3AbeITZ>

<sup>67</sup> Տեղեկատվության հարցման պատասխան, էթիկայի և կարգապահական հարցերով Հանձնաժողով, 2 հուլիսի 2024 թ, ԴԴ-Ե-5326 գրություն

դատավորների նկատմամբ հարուցվել են թվով 14 կարգապահական վարույթներ, որոնցից 8-ով միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհուրդ՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով<sup>68</sup>:

Նույն ժամանակահատվածում՝ 2023 թվականին, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը վարույթ չի հարուցել, սակայն ստացել է դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու թվով 9 դիմում, որոնք վերահասցեագրել է Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողով<sup>69</sup>:

Ներկայացված պատկերը ըստ էության ցույց է տալիս, որ առավել թվով դիմումներ ներկայացվել և վարույթներ հարուցվել են Արդարադատության նախարարության կողմից:

Այս առնչությամբ վերջին տարիներին արձանագրված հիմնական խնդիրները և քննարկման առարկա դարձած հարցերը վերաբերել են դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պրակտիկ դրսևորումներին, ընտրված պատասխանատվության միջոցին և Խորհրդի կողմից կայացված որոշումների համաչափությանը:

Այսպես, 2023 թվականին տեղի ունեցած կարգապահական պատասխանատվության գործերով արձանագրվել են դատավորների լիազորությունների դադարեցման մի շարք դեպքեր, որոնց պարագայում Խորհրդի կողմից որոշված պատասխանատվության միջոցը և մասնավորապես դրա համաչափությունը, խնդրահարույց է: Գործերից մեկով վարույթի հարուցման հիմք է հանդիսացել այն, որ դատավորը հրապարակային կարծիք է հայտնել Բարձրագույն դատական խորհրդում քննվող գործի վերաբերյալ: Ըստ վարույթ հարուցող մարմնի՝ դատավորը որոշման եզրափակիչ մասի հրապարակումից հետո հրապարակայնորեն կասկածի տակ է առել տվյալ դատական ակտը և դատարանի գործողությունները<sup>70</sup>: Նմանատիպ մեկ այլ գործով կարգապահական պատասխանատվության վարույթի հարուցման հիմք է հանդիսացել այն, որ դատավորը հրապարակային կարծիք է

<sup>68</sup> Տեղեկատվության հարցման պատասխան, ՀՀ Արդարադատության նախարարություն, 26.06.2024թ, գրություն N 25419-2024

<sup>69</sup> Տեղեկատվության հարցման պատասխան, Կոռուպցիայի Կանխարգելման Հանձնաժողով, 01.07.2024թ, 01/ 2029-2024 գրություն

<sup>70</sup> Բարձրագույն դատական խորհուրդ , ԲԴԽ-20-Ո-Կ-9

արտահայտել այն մասին, որ Խորհրդի անդամներն իրենց որոշումները կայացնելիս անկախ և անաչառ չեն՝ կաշկանդված լինելով որոշակի ուղղորդումներով կամ ցուցումներով<sup>71</sup>: Նշված գործերով, չնայած որ կարող են օբյեկտիվ դիտորդի մոտ արձանագրվել դատավորների կողմից վարքագծի կանոնների խախտման դրսևորումներ, այնուհանդերձ, դատավորների լիազորությունների դադարեցումը խնդրահարույց է դիտարկվել:

Հարկ է նշել, որ վերոնշյալ գործերից մեկով ներկայացված Սահմանադրական բողոքի հիման վրա արդեն իսկ Սահմանադրական դատարանի կողմից կայացվել է որոշում՝ արձանագրելով մի շարք կարևոր խախտումներ: Մասնավորապես, դատավորը դիմել է Սահմանադրական դատարան՝ բարձրացնելով գործի քննության ընթացքի՝ հրապարակայնության և իր լսված իրավունքի ապահովման հետ կապված խնդիրներ: Դատարանը գտել է, որ «*դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցած Բարձրագույն դատական Խորհրդի կողմից Սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի վիճարկվող 6-րդ մասին տրված մեկնաբանությունը չի համապատասխանում նշված նորմի սահմանադրաիրավական նշանակությանն ու բովանդակությանը եւ այդպիսով չի ապահովում Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ դատական վարույթի հրապարակայնության սահմանափակման պահանջները՝ հանգեցնելով Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ գործի հրապարակային քննության իրավունքի խախտման:*

*Ըստ ՄԴ-ի՝ դատավորի կողմից կատարված արտահայտությունները, որոնք հիմք էին հանդիսացել կարգապահական վարույթ հարուցելու համար, արդեն իսկ հանրայնացվել էին՝ տարածվելով զանգվածային լրատվության միջոցներով, եւ հանրությանը հայտնի էին դարձել նախքան կարգապահական վարույթի հարուցումը: Այսինքն, արդարադատության շահերի պաշտպանության նպատակով կարգապահական վարույթը դրնփակ դատական նիստում իրականացնելու մասին որոշման կայացման պահին նման արտահայտությունները, որոնց իրավաչափության գնահատականը վերապահված է Բարձրագույն դատական խորհրդի իրավասությանը, կարգապահական վարույթի հրապարակայնության սահմանափակման վերաբերյալ որոշման մեջ այլ հիմնավորման բացակայության պայմաններում արդեն իսկ ունեցել էին իրենցով դատական իշխանության հեղինակության նկատմամբ ԲԴԽ գնահատականով վնասելու ազդեցությունը: Ինչ*

---

<sup>71</sup> Բարձրագույն դատական խորհուրդ , ԲԴԽ-57-Ո-Կ-16

վերաբերում էր դատավորի հեռացմանը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիան, հանդիսանալով անձի՝ դատավարական իրավունքների սահմանափակման ինտենսիվ միջոց, պետք է կիրառվի միայն առանձնահատուկ դեպքերում, երբ ավելի մեղմ դատական սանկցիայի գործադրմամբ անհնար է արդյունավետ կերպով հակազդել վարույթի մասնակցի ոչ իրավաչափ վարքագծին. խնդրո առարկա նորմի հակառակ ընկալման պարագայում կիսեղաթյուրվի դատական սանկցիայի դատավարական առաքելությունը<sup>72</sup>»։ Ըստ որոշման՝ գործը ենթակա է վերանայման՝ նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով։

Հարկ է սակայն նշել, որ նման խնդրահարույց գործեր արձանագրվել են 2024 թվականի առաջին կիսամյակում ևս՝ կրկին հանգեցնելով դատավորների լիազորությունների դադարեցման և դրա շուրջ քննարկումների։ Գործերից մեկի հիմքում ընկած է եղել դատավորի կողմից ժամկետների խախտման հարցը, որի հարուցումը սակայն դատավորի թիրախավորման կասկածներ է հարուցում<sup>73</sup>, մյուս գործով, ըստ ԲԴԽ-ի էական կարգապահական խախտում է թույլ տվել, որի հետևանքով նախկին նախագահ Քոչարյանին առնչվող քրգործերն արդյունավետ չեն քննվել և Քոչարյանն ազատվել է պատասխանատվությունից։ Այս գործը նույնպես լուրջ քննադատության տեղիք է տվել և հանգեցրել քննարկումների, քանզի հանրության մեջ կա մոտեցում, որ քաղաքական խոստումները կյանքի չկոչելու համար պատժվում են դատավորները<sup>74</sup>։ Կարող ենք արձանագրել, որ վերջին տարիներին դատավորների անկախության հետ կապված հիմնական խնդիրներն ու ռիսկերը կապված են եղել կարգապահական

---

<sup>72</sup> Հանուն Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության Սահմանադրական Դատարանի որոշումը Դավիթ Հարությունյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության Վարչական Դատավարության Օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին Մասի 2-րդ կետի եւ «Հայաստանի Հանրապետության Դատական Օրենսգիրք» Սահմանադրական Օրենքի 90-Ը հոդվածի 6-րդ մասի՝ հաշվի առնելով նաև նշված դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները, Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, 21 մայիսի 2024թ

<sup>73</sup> Թիրախավորված էր դատավորը. ԲԴԽ-ն կասկած է հայտնում, բայց լիազորությունը դադարեցնելու որոշում կայացնում.

ՏԵՍԱՆՅՈՒԹ

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝

<https://bit.ly/4fdc2jx>

<sup>74</sup> Ռոբերտ Քոչարյանը, Մերժ Սարգսյանը և այլ նախկիններ ճաղերի հետևում չհայտնվեցին.

ձախողում, թե՛ դատական արդար վճիռներ

Ամբողջական հոդվածը կարող եք կարդալ այս հասցեով՝ <https://factor.am/794034.html>

վարույթների հարուցման և վերջնարդյունքում կայացվող որոշումների հիմնավորվածության և ընտրված պատասխանատվության միջոցի համաչափության հետ:

Կարգապահական պատասխանատվության մասին խոսելիս որպես դրական զարգացում պետք է ներկայացնել Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կազմի փոփոխությունը, ինչը բխում է նաև 2022-2026 թթ Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությունից: Այսպես, ռազմավարության համաձայն՝ ներկայումս դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը կազմված է 8 անդամներից, որոնցից ոչ դատավոր անդամների թիվը սահմանափակվում է 2-ով: Արդյունքում, սակայն, դատավոր անդամները, մինչև նույն է, ունենում են գերակշիռ մասնակցություն հանձնաժողովի կազմում և դրա որոշումների կայացման ընթացքում: 2017 թ.-ի հոկտեմբերին Դատական օրենսգրքի նախագծի վերաբերյալ տրված կարծիքում Վենետիկի հանձնաժողովը ընդգծել է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում կորպորատիվ մոտեցում որդեգրելու ռիսկերը՝ առաջարկելով հանձնաժողովի կազմի հավասարակշռումը ոչ դատավոր անդամների ընդգրկման միջոցով<sup>75</sup>: Համանման մտահոգություն և առաջարկ արտահայտվել էր նաև Համաշխարհային Բանկի կողմից ՀՀ դատական համակարգի վերաբերյալ պատրաստված զեկույցում<sup>76</sup>: Նույն զեկույցով առաջարկվել է բարելավել դատավորների Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի գործունեությունն ու կազմը, այնպես, որ վերջնարդյունքում կհանգեցնի Արդարադատության նախարարության կողմից կարգապահական վարույթներ հարուցելու իրավասության վերացմանը<sup>77</sup>: Առաջարկի հիմքում կրկին ընկած է եղել Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կազմի և գործունեության, զուգահեռաբար նաև գործադիր մարմնի կողմից վարույթներ հարուցելու վերաբերյալ մտահոգությունը: Ինչով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել վերանայել դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հանձնաժողովում որոշումների կայացման գործընթացում ոչ դատավոր անդամների ձայների կշիռը, ինչպես նաև հանձնաժողովի ձևավորման կարգը: Այդ նպատակով ՀՀ Արդարադատության նախարարության կողմից մշակվել է համապատասխան

<sup>75</sup> CDL-AD(2017)019

[https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2017\)019-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2017)019-e)

<sup>76</sup> World Bank Group, report “Supporting Judicial Reforms in Armenia: A Forward Look”, 2023

<https://bit.ly/3A8wMtS>

<sup>77</sup> նույն տեղում

նախագիծ, որը նախատեսում է մեծացնել հանձնաժողովում ոչ դատավոր անդամների թիվը, ներկայիս երկուսի փոխարեն նախատեսելով 5 ոչ դատավոր անդամ: Նախատեսվում է նաև փոխել անդամների առաջադրման կարգը, համաձայն որի, թեկնածուները ներկայացվում են Մարդու իրավունքների պաշտպանի, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, ՀՀ Արդարադատության նախարարության և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից: Անդամների ընտրության հարցը շարունակում է մնալ Դատավորների ընդհանուր ժողովի իրավասության ներքո, սակայն այն դեպքում, երբ Ժողովը անդամ չի ընտրում, վերջինիս ընտրությունը իրականացվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից՝ որպես փակուղային իրավիճակների լուծման մեխանիզմ<sup>78</sup>: Կարևորելով առաջարկվող փոփոխությունները՝ նախագիծը ներկայացվել է նաև Վենետիկի հանձնաժողով՝ փոփոխությունների վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով: Վենետիկի հանձնաժողովի կողմից նախ դրական է գնահատվել էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կազմի փոփոխությունն ու ոչ դատավոր անդամների թվի ավելացումը՝ որպես դատական կորպորատիվի ռիսկերի նվազեցմանն ուղղված քայլ, այնուհանդերձ, նշվել է, որ նման փոփոխությունը չպետք է հանգեցնի այլ մարմինների կողմից դատական իշխանության նկատմամբ անհարկի ազդեցությամբ և դատական անկախությունը չպետք է կազմի բազմազանության ապահովման պատճառով վտանգի ենթարկվի: Վենետիկի հանձնաժողովը, ինչպես նախագծի քննարկմանը մասնակից քաղհասարակության ներկայացուցիչները, մտահոգություն է հայտնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և Արդարադատության նախարարության կողմից թեկնածուների առաջադրման վերաբերյալ: Միննույն ժամանակ առաջարկվել է Արդարադատության նախարարությանը կարճաժամկետ նման լիազորություն տալ: Առաջարկվող փոփոխությունների հիմնական նպատակը պետք է լինի վերացնել Արդարադատության նախարարության կողմից ինչպե՛ վարույթ հարուցելու իրավասությունը, այնպես էլ թեկնածուներ առաջադրելու<sup>79</sup>:

Ներկայացված փոփոխությունների մեջ կարևոր հարցերից մեկը շարունակում է մնալ ոչ դատավոր անդամների ընտրության կարգը, ինչի կապակցությամբ

---

<sup>78</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրական Օրենքը «Հայաստանի Հանրապետության Դատական Օրենսգիրք» Սահմանադրական Օրենքում Լրացումներ Եվ Փոփոխություններ Կատարելու Սափին, <https://www.e-draft.am/en/projects/5955>

<sup>79</sup> Venice Commission, Joint opinion of the Venice Commission and the Directorate General of Human Rights and rule of law of the Council of Europe on Armenia on the concept paper concerning the reform of the Ethics and Disciplinary commission of the General Assembly of Judges, 15-16 December 2023



Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ քաղաքացիական հասարակության կողմից ոչ դատավոր անդամների ընտրության մեկ միասնական մոդել գոյություն չունի<sup>80</sup>: Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրությունը ընդունելի տարբերակ է, եթե վերջինս կայացնում է հիմնավորված որոշում: Նմանապես, ողջունելի է համարվում ունենալ փակուղային իրավիճակներում ընտրության կազմակերպման մեխանիզմ, ինչը տվյալ պարագայում ԲԴԽ կողմից անդամների ընտրությունն է: Այստեղ սակայն կարևորվում է ԲԴԽ-ն քաղաքական ազդեցություններից զերծ պահելը<sup>81</sup>:

Չնայած մշակված նախագծին, Վենետիկի հանձնաժողովի կողմից ներկայացված կարծիքին և հանրային քննարկումներին՝ մինչ օրս հանձնաժողովի կազմի վերաբերյալ փոփոխությունները կյանքի կոչված չեն:

Հաշվի առնելով կարգապահական պատասխանատվության հարցի և դրանում ներգրավված մարմինների դերի կարևորությունը՝ այս փոփոխությունները պետք է հնարավորինս արագ կյանքի կոչվեն՝ որպես վերջնանպատակ նոր, լայն ներգրավվածություն ունեցող և արժանիքահեն ընտրությամբ ձևավորված Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի ձևավորումը, որը կվերացնի դատական կորպորատիվի սպասարկման վերաբերյալ ռիսկերն ու հնարավորություն կտա վերացնել Արդարադատության նախարարությանը կարգապահական վարույթ հարուցելու տրված իրավասությունը: Սա իր հերթին կուժեղացնի դատավորների անկախության երաշխիքները:

#### *ԲԴԽ որոշումների բողոքարկում*

Դատավորների անկախության ապահովման կարևոր երաշխիքներից է նաև վերջիններիս ընթացակարգային իրավունքների ապահովման արդյունավետ մեխանիզմների ներդրումը: Սա հատկապես վերաբերելի է կարգապահական վարույթի ընթացքում և վարույթի արդյունքների բողոքարկման առնչությամբ:

Մասնագիտական համայնքի կողմից որպես խնդիր մշտապես ներկայացվել է այն հարցը, որ ԲԴԽ որոշումները բովանդակային առումով բողոքարկման արդյունավետ մեխանիզմ չունեն: 2023 թվականին կատարված օրենսդրական փոփոխություններով այս հարցին փորձ է արվել լուծում տալ, և նախատեսվել է

<sup>80</sup> Նույն տեղում, պարագրաֆ 30

<sup>81</sup> Նույն տեղում, պարագրաֆ 32

Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական գործերով որոշումների բողոքարկման իրավական հնարավորություն<sup>82</sup>: Դրական քայլ կարելի է դիտարկել նաև ռազմավարությամբ նախատեսված՝ Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական գործերով որոշումների բողոքարկման իրավական հնարավորության նախատեսումը, ինչը կրկին, չնայած երկար քննարկումների և օրենսդրական ամրագրման, մինչ օրս ԲԴԽ կողմից կյանքի չի կոչվել:

Համաձայն փոփոխությունների՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունն իրականացնելու է ԲԴԽ 4 անդամ ընդգրկող կազմը: ԲԴԽ նշված կազմը յուրաքանչյուր կարգապահական վարույթով լինելու է տարբեր եւ ընդգրկելու է դատավորների ընդհանուր ժողովի եւ ԱԺ-ի կողմից ընտրված երկուական թեկնածու: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշման դեմ բերված բողոքի քննությունն իրականացնելու է ԲԴԽ-ն՝ տվյալ կարգապահական վարույթով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության կազմում չընդգրկված անդամների կազմով<sup>83</sup>:

Չնայած այս փոփոխությունը ևս նախատեսված էր և տեղ է գտել օրենքում, սակայն Բարձրագույն դատական խորհրդի կողմից համապատասխան որոշում և փոփոխություններ դեռևս չեն կայացվել: Մինչդեռ վերջին շրջանում տեղի ունեցած դատավորների լիազորությունների դադարեցման դեպքերը ենթադրում էր նաև բողոքարկման գործիքակազմի անհրաժեշտություն և հնարավոր կիրառում լիազորությունները դադարեցված դատավորների կողմից, սակայն վերջիններս շարունակում են զրկված մնալ նման հնարավորությունից:

## ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Խոսելով դատական իշխանության անկախության մասին՝ պետք է ուշադրություն դարձնել նաև տվյալ համակարգում գործող ինքնակառավարման մարմիններին, վերջիններիս տրված գործառույթներին ու իրավասություններին:

Դատական օրենսգիրքը որպես դատավորների ինքնակառավարման մարմին նախատեսում է Դատավորների ընդհանուր ժողովը<sup>84</sup>: Ներպետական

<sup>82</sup> ՀՀ Դատական օրենսգիրք Սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Սահմանադրական օրենքը, ընդունված 2023թ հոկտեմբերի 25-ին

<sup>83</sup> Խորհրդարանը երկրորդ ընթերցմամբ քննարկել է մի շարք օրենսդրական նախաձեռնություններ <https://bit.ly/48fNNPq>

<sup>84</sup> ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 74

օրենսդրությունը սահմանել է նաև վերջինիս կազմը և գործունեությանն առնչվող հիմնական դրույթները:

Ընդհանուր ժողովը կազմված է Հայաստանի Հանրապետության բոլոր դատավորներից, որոնք ի պաշտոնե Ընդհանուր ժողովի անդամներ են: Հերթական Ընդհանուր ժողովը հրավիրվում է տարին մեկ անգամ՝ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից: Արտահերթ Ընդհանուր ժողով կարող է հրավիրել Վճռաբեկ դատարանի նախագահը՝ իր նախաձեռնությամբ, դատավորների առնվազն մեկ հինգերորդի կամ Ընդհանուր ժողովի հանձնաժողովի պահանջով: Նախաձեռնողն առաջարկում է օրակարգում ընդգրկվող հարցը: Ընդհանուր ժողովը վարում է Վճռաբեկ դատարանի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Վճռաբեկ դատարանի նախագահին փոխարինող անձը:

Ինչ վերաբերում է Ընդհանուր ժողովի հիմնական գործառույթներին, ապա վերջինս՝

1) քննարկում և Բարձրագույն դատական խորհուրդ և այլ իրավասու պետական մարմիններ է ներկայացնում դատարանների գործունեության բարելավմանն ուղղված առաջարկություններ.

2) ձևավորում է Էթիկայի և կարգապահական, Ուսումնական հարցերի, ինչպես նաև Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովներ և իր գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար՝ աշխատանքային խմբեր.

3) հաստատում է իր, հանձնաժողովների, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև աշխատանքային խմբերի գործունեության կարգը.

4) ընտրում և առաջարկում է Սահմանադրական դատարանի դատավոր անդամների թեկնածությունները.

5) ընտրում է Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամներին.

6) հաստատում է դատավորի պատմուճանի նկարագրությունը և տրամադրման կարգը.

7) սահմանում է դատավորի էթիկայի կանոնները.

8) քննարկում է դատարանների աշխատակազմերի տարեկան գործունեության վերաբերյալ Դատական դեպարտամենտի հաղորդումը.

9) իրականացնում է այլ գործառույթներ:

Նախորդ գլխում արդեն ներկայացվեց Բարձրագույն դատական խորհրդի ձևավորման կարգն ու հիմնական գործառույթները, ինչպես նաև դրա հետ կապված մտահոգությունները: Ընդհանուր ժողովին տրված առանձին գործառույթներ, մասնավորապես, էթիկայի և կարգապահական, ուսումնական հարցերի, ինչպես նաև

Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովների ձևավորումը, Սահմանադրական դատարանի դատավոր ընտրելն ու առաջարկելը, կարող է դատական իշխանության ներսում կարևորագույն մարմինների միջև զսպիչների և օրենսդիր մարմնի հետ հակակշիռների ապահովման կարևոր երաշխիք հանդիսանալ:

Ավելին, դիտարկելով վերջին տարիներին ՀՀ Վճռաբեկ և Սահմանադրական դատարաններում դատավորների ընտրության և նշանակման գործընթացները, կարելի է պնդել, որ Ընդհանուր ժողովին տրված նման իրավասությունը զսպիչների և հակակշիռների լուրջ միջոց կարող է հանդիսանալ նաև իշխանության այլ թևերի համատեքստում:

Մասնավորապես, անցնող տարում եղել են դեպքեր, երբ Ազգային ժողովը չի ընտրել Ընդհանուր ժողովի կողմից ընտրված ՄԴ դատավորի թեկնածուին, ինչի հիմքերն ու պատճառները սակայն չեն ներկայացվել<sup>85</sup>: Եվ ստացվում է, որ Ընդհանուր ժողովի դերը, որպես այդպիսին, նվազում է, քանզի օրենսդիրը կարող է թեկնածուին ընտրելու իր գործառույթը չարաշահել՝ ըստ իր նպատակահարմարության<sup>86</sup>:

Այս համատեքստում զսպիչները և հավասարակշռությունը պահանջում են կառուցողական համագործակցություն հանրային շահերին հասնելու համար, դրանք պահանջում են նաև փոխադարձ հարգանք նաև տարբեր իշխանության թևերի պատկանող մարմինների միջև՝ որպես վերջիններիս միջև համապատասխան հավասարակշռություն և փոխադարձ վերահսկողություն ապահովելու միջոց: Սա կարելի է լավագույնս դիտարկել դատական և օրենսդիր իշխանության առնչությամբ՝ Դատավորների ընդհանուր ժողովին տրված իրավասությունների համատեքստում: Այսինքն, դատական իշխանությունը ի դեմս Ընդհանուր ժողովի իրավունք է ստացել մասնակցել և կարևոր դերակատարում ունենալ Սահմանադրական դատարանի անդամների ընտրության գործին: Մինչդեռ, օրենսդիր մարմնի կողմից Ընդհանուր ժողովի կողմից ընտրված թեկնածուներին ինչ-ինչ պատճառներով մերժելը ոչ միայն Ընդհանուր ժողովի ձայնը լռեցնող, այլ զսպիչների և հակակշիռների նկարագրված սկզբունքը խախտող մոտեցում է, ինչը բացասաբար է ազդում նաև դատական իշխանության բնականոն գործունեության ապահովման և անկախության վրա:

<sup>85</sup> <https://bit.ly/4eQhpW1>

<sup>86</sup> <https://news.am/arm/news/812623.html>

## ԱՄՓՈՓՈՒՄ

Դատական իշխանության անկախության հարցը Հայաստանի Հանրապետությունում շարունակում է մնալ արդիական, ինչի լուծումը պահանջում է ինչպես արդեն իսկ նախաձեռնված օրենսդրական փոփոխությունների արդյունավետ կյանքի կոչում, այնպես էլ գործող կարգավորումների պրակտիկ և արդյունավետ կիրարկում: Կրկին պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ դատական համակարգի խոստացված համակարգային փոփոխություններ և համակարգի մաքրում, որպես այդպիսին, գործող իշխանությունների կողմից չիրականացվեցին, իսկ ձեռնարկված հատային փոփոխությունները դեռևս գոհացնող արդյունք չեն տվել:

Ինչպես կարելի է նկատել ներկայացված նյութից և կատարված ուսումնասիրությունից՝ օրենսդրական մակարդակում ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ Դատական օրենսգրքով ամրագրված են կարգավորումներ, որոնք բավարար երաշխիքներ են ստեղծում համակարգի անկախության և արդյունավետության համար, զուգահեռաբար ընթացքի մեջ են մի շարք օրենսդրական փոփոխությունների գործընթացներ, որոնց վերաբերյալ հնարավոր կլինի կարծիք տալ վերջնականացվելուց հետո: Միննույն ժամանակ, սակայն, պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության անկախության ապահովման խնդիրները մեծամասամբ կապված են գործող կարգավորումների պրակտիկ կիրառելիության և առկա երաշխիքների նկատմամբ հետևողականություն ու հարգանք ցուցաբերելու հետ:

Այս համատեքստում դատական իշխանության և դատավորների անհատական անկախության ապահովման գործում էական դերակատարում ունի Բարձրագույն դատական խորհուրդը՝ հաշվի առնելով վերջինիս սահմանադրական կարգավիճակն ու դերը: Սակայն, ինչպես ցույց տվեց վերջին տարիներին ԲԴԽ ձևավորման կարգը, համակարգի անկախության մարտահրավերները սկսվում են հատկապես վերջինիս ձևավորման փուլից, կապված լինելով կազմի ձևավորման քաղաքականացվածության հետ, ինչը հետո ռիսկեր է ստեղծում ԲԴԽ բնականոն գործունեության ապահովման և կարևորագույն գործառույթների արդյունավետ իրականացման համար: Ըստ էության, Բարձրագույն դատական խորհրդի արդյունավետ և անկաշկանդ գործունեության երաշխիքը վերջինիս մրցակցային սկզբունքով, արժանիքահեն ու ապաքաղաքական

ընթացակարգով ձևավորված կազմն է, ինչն էլ ուղղակիորեն կապված է վերջինիս հիմնարար գործառույթների և ողջ համակարգի անկախության ապահովման հետ:

Մասնավորապես, առավել խնդրահարույց կարելի է համարել դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պրակտիկան, ինչը վերջին տարիներին և առանձին գործերով շեղվում է կիրառման նպատակային նշանակությունից և մարտահրավերներ ստեղծում դատավորների ազատ և անկաշկանդ գործունեության համար: Նման պրակտիկան պահանջում է ինչպես ինստիտուցիոնալ փոփոխություններ՝ ի դեմ դատավորների էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի, այնպես էլ պրակտիկայում այս ինստիտուտի գործադրման հիմքերի և առիթների բացառապես նպատակային օգտագործում՝ վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների կողմից:

Խնդրահարույց է նաև դատավորների ընտրության և նշանակման գործընթացը, քանզի առանձին դեպքերում շրջանցվում են բարեվարքության եզրակացություններն ու տրված կարծիքները: Եվ արդյունքում ստեղծվում է իրավիճակ, երբ համակարգը մի կողմից փորձ է արվում մաքրել ոչ բարեխիղճ դատավորներից, մյուս կողմից դատավորի պաշտոնում նշանակվում և առաջխաղացում են ունենում մասնագետներ, ովքեր բարեվարքության հետ կապված խնդիրներ ունեն: Առանձնակի կարևորություն ունի նաև ներդրված հատուկ կարգով որակավորման մրցույթի անցկացումը, որը չի պահանջում թեկնածուների ուսումնառություն Արդարադատության ակադեմիայում և մտահոգություններ առաջացնում դատավորների տեսական գիտելիքների և պրակտիկ հմտությունների առնչությամբ: Ավելին, արագացված կարգով դատավորի պաշտոնի ստանձնումը մտահոգություններ է առաջացնում հետագա գործունեության անաչառության առնչությամբ:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### *Բարձրագույն դատական խորհրդի կազմն ու ձևավորումը*

- Ապահովել Ազգային ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի ոչ դատավոր անդամների թեկնածուների առաջադրման և ընտրության մրցակցային, թափանցիկ և արժանիքահեն գործընթաց:
- Վերանայել Բարձրագույն դատական խորհրդի ոչ դատավոր անդամների ընտրության պրակտիկան՝ բացառելով գործադիր կամ օրենսդիր մարմնի ներկայացուցիչների, ինչպես նաև քաղաքական հարում ունեցող թեկնածուների ընտրությունը Խորհրդում:
- Հստակեցնել ԲԴԽ կազմում Ազգային ժողովի կողմից ոչ դատավոր անդամի թեկնածու իրավաբան-գիտնականներին առաջադրվող պահանջները՝ աշխատանքի հիմնական ուղղությունը, ոլորտը, ժամանակահատվածը, ինչպես նաև հեղինակավոր իրավաբանին առաջադրվող պահանջները և դրա գնահատման օբյեկտիվ չափանիշները:

### *Դատավորների ընտրություն և նշանակում*

- Օրենսդրորեն ամրագրել Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորների ընտրության և առաջխաղացման առնչությամբ կայացվող որոշումների պատճառաբանված լինելու պահանջը՝ հատկապես բացասական եզրակացությամբ նշանակումների դեպքում:
- Վերացնել Բարձրագույն դատական Խորհրդի կողմից բացասական բարեվարքության գնահատական ունեցող դատավորների թեկնածուների նշանակումն ու առաջխաղացումը դատական համակարգում:
- Օրենսդրությամբ նախատեսել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կայացվող բարեվարքության գնահատման եզրակացությունների եզրափակիչ մասը հրապարակային դարձնելու պահանջ:

### *Դատավորների կարգապահական պատասխանատվությունը*

- Վերացնել կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների կողմից դատավորների նկատմամբ «պատժիչ» նպատակով կամ ընտրողաբար վարույթ հարուցելու պրակտիկան:

- Վերանայել դատավորների էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կազմը՝ նախատեսելով կազմում քաղհասարակության լայն ներգրավվածություն:
- Ոչ դատավոր անդամներին առաջադրել մասնագիտական գործունեության հստակ պահանջներ, վերջիններիս համար նախատեսել քաղաքական չեզոքության պարտադիր պահանջ:
- Օրենքով նախատեսել, որ Դատավորների ընդհանուր ժողովը էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի անդամների ընտրությունը, ինչպես թեկնածուին ընտրելը, այնպես էլ մերժելը, իրականացնում է պատճառաբանված որոշում ընդունելով: Փակուղային իրավիճակներից խուսափելու համար նախատեսել, որ Ընդհանուր ժողովի կողմից ոչ դատավոր անդամ չընտրվելու դեպքում ընտրությունը իրականացվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից:
- Ապահովել, որ Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ցանկացած որոշում պարունակի լիարժեք պատճառաբանություն և հիմնավորում ընտրված կարգապահական պատասխանատվության միջոցի տեսակի առնչությամբ:
- Ապահովել Բարձրագույն դատական խորհրդի կայացած որոշումների դեմ դատավորների կողմից բողոք բերելու իրավունքն ու գործադրել անհրաժեշտ արդյունավետ մեխանիզմները: